

## **ՆՈՐ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՈՐ ՄԱՐՏԱՅՐԱՎԵՐՆԵՐ** **Գազիկ Տեր-Չարությունյան**

XX դարասկզբի աշխարհաքաղաքական տեղաշարժերը Հայաստանի համար ծանրագույն փորձություն դարձան՝ հանգեցնելով Ցեղասպանության եւ Արեւմտահայաստանի կորստին: XX դարավերջի ցնցումները, որոնք պայմանավորված էին Սառը պատերազմում ԽՍՀՄ կրած պարտությամբ, նույնպես բացասաբար անդրադարձան Հայաստանի վրա: մենք ծանր կորուստներ կրեցինք տնտեսական, սոցիալ-ժողովրդագրական եւ գիտատեխնոլոգիական ոլորտներում: Սակայն, դրան զուգահեռ, շնորհիվ քաղաքակրթական ռեսուրսների եւ Երկրորդ հանրապետությունում կուտակած պոտենցիալի, Հայությունը կարողացավ մասամբ իրականացնել իր խնդիրները: հաղթեց Արցախյան պատերազմում եւ ձեւավորեց Երրորդ եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունները:

Եթե փորձենք համակարգել մեր հանրության՝ այդ շրջանում անցած ուղու փուլերը, ապա կարելի է ներկայացնել հետեւյալ պայմանական սխեման.

1. Ազգային հասարակական-քաղաքական շարժման ձեւավորում, խորհրդային համակարգի ապամոտաժում, Հայաստանը փաստացի եւ իրավաբանորեն դուրս է գալիս ԽՍՀՄ կազմից:

2. Ադրբեջանական ագրեսիային զինված դիմակայության կազմակերպում. սկզբում՝ տարերայնորեն, հետո՝ կամավորական ջոկատների եւ կանոնավոր բանակի ձեւով: Այդ գործընթացն ավարտվեց Ադրբեջանի դեմ տարած հաղթանակով եւ Բիշքեկում զինադադարի ստորագրմամբ:

3. Ազգային պետության կայացման գործընթացը հայկական երկու հանրապետությունների՝ ՀՀ-ի եւ ԼՂՀ-ի ձեւաչափով:

Հաղթանակն Արցախյան դիմակայությունում երբեմն վերագրում են բացառապես մեր գործի ճշմարտացիության գիտակցմանը, ժողովրդի հայրենասիրությանը, քաջությանը եւ խանդավառությանը: Անշուշտ, առանց այս գործոնների անհնար կլինեք հաղթել: Սակայն այս հատկանիշները ձեւավորվել են նաեւ օբյեկտիվ այլ հանգամանքների շնորհիվ: Փորձենք առանձնացնել դրանցից հիմնականները:

❖ Հայաստանը ազգային-պետական կառավարման եւ ինքնակազմակերպման քաղաքական փորձ ունի: Նույնիսկ մեր պատմության այն

ժամանակաշրջաններում, երբ կորցրել ենք պետական ատրիբուտիկան, ազգային ընտրանին այս կամ այն ձևով (եկեղեցական-կրոնական կառույցներ, ինքնավար իշխանական տներ, Հայաստանից դուրս համայնքներ կամ էլ գործիչների առանձին խմբեր) պահպանել է եթե ոչ ողջ ազգային հանրույթի, ապա՝ առնվազն նրա հիմնական հատվածների կառավարելիությունն ազգային արժեքների ու նպատակների իմաստով:

❖ Առաջին եւ երկրորդ հանրապետություններում ձեւավորվեց նոր որակի քաղաքական ընտրանի: Չնայած այդ հանրապետությունների գործիչների միջեւ առկա հակասությանը, նրանք ընդհանուր առմամբ մեծ գործ են կատարել ազգային գաղափարների պահպանման եւ զարգացման համար: Առաջին հանրապետության անկումից հետո մի շարք այրեր իրենց գործունեությունը շարունակեցին Սփյուռքում, եւ մեծ է նրանց վաստակը Հայության պահպանման գործում: Հայկ. ԽՍՀ-ում ձեւավորվեց քաղաքական գործիչների նոր համաստեղություն, որոնք կարողացան հանրության մեջ պահպանել ազգային գաղափարները՝ ուղղված Ցեղասպանության եւ Արեւմտահայաստանի կորստի փաստերի ճանաչմանը, Հայկ. ԽՍՀ-ին Արցախի, Նախիջեւանի եւ Ջավախքի վերամիավորմանը: Քաղաքական մշակույթի բարձր մակարդակը բնութագրական էր նաեւ ԼՂԻՄ-ի համար, որտեղ պայքարը Հայկ. ԽՍՀ-ին միանալու համար գլխավորեցին կուսակցական-տնտեսական ընտրանու ներկայացուցիչները:

❖ Հայ հանրությանը բնորոշ է ակնածանքը ռազմական գործի հանդեպ: Հայրենական պատերազմի տարիներին ձեւավորվեց պատկառելի «հայ սպայական կորպուսը»՝ կազմված խոշոր զորահրամանատարներից: Ավելի քան հարյուր զինվոր եւ սպա Խորհրդային Միության հերոսի աստղ ստացան: Դա մեծ ազդեցություն էր գործում հայ հանրության հոգեբանական տրամադրվածության վրա: Միեւնույն ժամանակ, ժողովրդի մեջ զարմանալիորեն պահպանվել են իռեզուլյար զինված դիմակայության բազմադարյան ավանդույթները եւ հմտությունները, ինչը դրսեւորվեց Արցախյան պատերազմի տարիներին: Հենց կադրային սպայության օպերատիվ արվեստի եւ կամավորական ջոկատների հրամանատարների մարտավարական օժտվածության համադրումը թույլ տվեց հաղթել հակառակորդին:

❖ Հայ հանրությունը կարողացավ արդյունավետորեն օգտագործել ԽՍՀՄ կազմում գտնվելու 70-ամյա շրջանը: 1980-ականների վերջին հանրապետությունը գերազանցում էր իր տարածաշրջանային հարեւաններին կրթության, գիտության եւ տեխնիկայի ոլորտներում, ինչպես նաեւ արդյունաբերական զարգացման մեջ: Հայաստանում ստեղծվեցին

գիտական դպրոցներ եւ ուղղություններ, որոնք ղեկավարում էին համաշխարհային համբավ ունեցող գիտնականներ: Սոցիալական բարձր կարգավիճակ ունեցող «ինտելեկտուալների կրիտիկական մասսայի» առկայությունը դրականորեն էր ազդում հանրության հոգեւոր-գաղափարական դրության վրա, եւ միանգամայն օրինաչափ է, որ «Ղարաբաղ կոմիտեի» կազմում գերակշռում էին հանրության հենց այդ հատվածի ներկայացուցիչները:

Բայց պատերազմում տարած հաղթանակից եւ ինքնիշխանության նվաճումից հետո Չայաստանը, կայսերական տարածքից դուրս հայտնվելով, բախվեց նոր մարտահրավերների, որոնցից մեկն էլ պետության այդքան ցանկալի ինքնիշխանության արժեզրկման գործընթացն էր:

Համաձայն եվրոպական պատմագրական ավանդույթի՝ ազգային ինքնիշխան պետությունները՝ որպես հասարակության քաղաքական կազմակերպման հիմնական ձեւ, ի հայտ եկան XVII դարում, Երեսնամյա պատերազմի ավարտից եւ 1648թ. «Վեստֆալյան խաղաղության» կնքումից հետո, որն էլ նշանավորեց «ազգային պետություն» հասկացության վրա հենվող միջազգային հարաբերությունների դարաշրջանի սկիզբը: Կարելոր է նշել, որ այդ պայմանագիրը նշանավորեց եւս մեկ էական հանգամանք. դրանից հետո Եվրոպայի գլխավոր կենտրոնի դերին հավակնող Չռոմեական սրբազան կայսրությունը զրկվեց այլ պետությունների գործերին միջամտելու ամեն տեսակ հնարավորությունից: Այսինքն՝ որոշ վերապահումներով կարելի է պնդել, որ «Վեստֆալյան խաղաղությունը» եւ «ազգային պետություն» իրավական հասկացության ձեւավորումը հանդիսացան այդ դարաշրջանի լուրջ եվրոպական «միաբեւեռ համակարգի» անկման եւ «բազմաբեւեռ եվրոպական աշխարհակարգի» ձեւավորման սկիզբը:

Չեովեստֆալյան շրջանում ազգային պետությունները փոխակերպումների ենթարկվեցին բազմաթիվ չափանիշներով: Բայց Եվրոպայում քաղաքական տիրապետության ձգտող ուժի խոշոր կենտրոնների ի հայտ գալը մշտապես նվազեցնում էր այլ պետությունների դերը: Այդպես է եղել Նապոլեոնի դարաշրջանում, այդպես էր նաեւ Սառը պատերազմի տարիներին. ինչպես «սոցճամբարի», այնպես էլ «ազատ աշխարհի» երկրներն իրենց լիազորությունների զգալի մասը (հատկապես միջազգային հարաբերությունների եւ պաշտպանության ոլորտներում) հանձնեցին համապատասխանաբար Մոսկվային եւ Վաշինգտոնին: Բայց երկբեւեռ համակարգի հետ միասին փլուզվեց ինչպես «սոցճամբարը», այնպես էլ այն պատրանքը, թե «չարի կայսրության» անկմամբ առաջ կգան «հիրավի ինքնիշխան» պետություններ: Միաբեւեռ համակարգում այլ

իրողություններ առաջ եկան. նախկին «սոցճամբարը» նետվեց դեպի եվրամիություն եւ ՆԱՏՕ:

Ինչէւէ, միութենական բոլոր հանրապետությունները եւ «ժողովրդական դեմոկրատիայի» երկրները ձեռք բերեցին ինքնիշխանության ատրիբուտներ, սակայն դրանցից մի քանիսի իրական քաղաքական կարգավիճակը շատ չէր տարբերվում նախկինից. տարբերությունը միայն այն էր, որ կառավարման կենտրոնը Մոսկվայից Վաշինգտոն էր տեղափոխվել: Այդ երկրների մի մասը վերլուծական գրականության մեջ ստացավ «proxy» որակումը, ինչը կարելի է մեկնաբանել որպես «արտաքին կառավարմամբ» երկիր: Այս առնչությամբ տեղին է մեջբերել Բ. Դիգրաելիի արտահայտությունը, թե՛ «գաղութները չեն դադարում գաղութներ լինելուց այն պատճառով, որ անկախություն են ձեռք բերել...»:

Վերադառնալով Սառը պատերազմին հաջորդած տարիներին՝ նշենք, որ միաբեւեռ համակարգի բյուրեղացման այդ շրջանում (վերադարձ «մինչվեստֆալյան աշխարհի» դարաշրջանին) ի հայտ եկան բազմաթիվ հրապարակումներ պետության անխուսափելի վախճանի մասին, որոնցից նշենք Մարտին վան Կրեւելդի «Պետության ծաղկումը եւ անկումը» մեմագրությունը: Որպես կոնցեպտի հիմք էր ընդունվում այն, որ ինտեգրման գործընթացները, անդրազգային ընկերությունների (ԱԱԸ) եւ ոչկառավարական կազմակերպությունների աճող դերն անխուսափելիորեն նվազեցնում են պետության սուվերենությունը, որը մնան պայմաններում ջանում է իր գործառույթները վերահանձնարարել այլ կառույցների:

Այս համատեքստում ներկայացնենք որոշ փաստեր ԱԱԸ-ների մասին, որոնց համարում են «պետության վախճանի հիմնական մեղավորները»: Այսօր ՄԱԿ տվյալներով գոյություն ունի ավելի քան 65 հազ. ԱԱԸ, որոնցում զբաղված է ավելի քան 74 մլն մարդ: Բնութագրական է, որ աշխարհի 100 առավել խոշոր տնտեսություններից 52-ը անդրազգային ընկերություն են եւ միայն 48-ն են պետություն. մի ամբողջ շարք ԱԱԸ-ների ՅՆԱ-ն (Royal Dutch Shell, BP) ավելին է, քան Շվեդիայինը, Արգենտինայինը եւ այլն: Հատկանշական է, որ 500 խոշոր ԱԱԸ-ների մոտ մեկ երրորդը բաժին է ընկնում ԱՄՆ-ին:

Բայց պետության «վախճանի» կողմնակիցները լուրջ ընդդիմախոսներ ունեն: Եվ դա միայն մշակութային ընտրանին չէ, որը կարծում է, թե ինքնիշխանության արժեզրկումը կհանգեցնի ազգերի վերասեռման: Այսօր ի պաշտպանություն ազգային պետության հանդես են գալիս փիլիսոփաները, խոշոր քաղաքագետները եւ վերլուծական «ուղեղային կենտրոնները»: Ըստ նրանց՝ ինքնիշխան պետությունները, չնայած փոխակերպումներին, կմնան որպես միջազգային հարաբերությունների

սուբյեկտներ եւ կառավարման առավել արդյունավետ գործիք: Ամերիկյան ռազմական վերլուծաբանների կարծիքով՝ ազգային պետությունների համար գլխավոր սպառնալիք է «Ալ-Քաիդայի» (պետության ինքնատիպ «փոխարինիչ»)՝ արմատական իսլամական կատարմամբ, որը ջիհադ է հայտարարել մեկ այլ՝ նույնպես խիստ պայմանական պետության՝ «համաշխարհային սիոնիզմին») տիպի ահաբեկչական կազմակերպությունների գործունեությունը: Սրան դիմակայել հնարավոր է միայն ազգային պետության պահպանմամբ եւ զարգացմամբ: Նման դիրքորոշում են որդեգրել նաեւ եվրոպացիները, որոնք ավանդաբար պետության ավելի մեծ կողմնակիցներ են համարվում, քան ամերիկացիները:

Պետության կողմնակիցներին ծանրակշիռ փաստարկներ տրամադրեց 2009թ. ճգնաժամը, երբ պարզվեց, որ առանց պետական միջամտության անհնար է հաղթահարել համակարգային ցնցումները: Ճգնաժամը ստիպեց ավելի քննադատաբար վերաբերվել ուլտրալիբերալ տնտեսության դոգմներին, որոնց տարրն են հանդիսանում նաեւ ԱԱԸ-ները: Ճգնաժամի պատճառների իմաստավորումը հանգեցրեց փոփոխությունների, մասնավորապես՝ եվրոպական տնտեսական քաղաքականությունում, որի որոշ տարրեր նախագահ Օբաման փորձում է ներդնել ԱՄՆ-ում:

Սակայն ազգային պետության «դիրքերն» արմատապես ամրապնդեց բազմաբեւեռ աշխարհակարգի ձեւավորումը, որը, ըստ էության, հիշեցնում է «հետվեստֆալյան աշխարհը»: Բազմաբեւեռությունը ենթադրում է ուժի մի քանի կենտրոնի առկայություն եւ, համապատասխանաբար, տարավեկտոր քաղաքականություն, ինչը հնարավոր է միայն ուժեղ պետական կազմակերպման պայմաններում: Պահանջները պետական կառույցից հատկապես բարձր են, երբ լուրջ հիմնախնդիրներ կան անվտանգության ոլորտում: Այս հանգամանքները բնորոշ են նաեւ Չայաստանին, որը՝

❖ ԼՂՀ կարգավիճակի հետ կապված խնդիրների պատճառով Ադրբեյջանի հետ «խրամատային պատերազմի» ռեժիմով ռազմաքաղաքական առճակատման մեջ է գտնվում:

❖ Ցեղասպանության միջազգային ճանաչման հետ կապված գործընթացների պատճառով չկարգավորված, հաճախ քաղաքական դիմակայության հասնող հարաբերություններ ունի Ադրբեյջանի դաշնակից Թուրքիայի հետ: Այդ երկիրը շրջափակել է Չայաստանի հաղորդակցությունները, այսինքն՝ նրա հետ հարաբերությունները կարելի է բնութագրել որպես «ոչ պատերազմ, ոչ խաղաղություն»:

Թվարկված գործոնները ենթադրում են բազմավեկտոր, բայց դիվա-նագիտական տեսակետից ոչ այնքան հարմարավետ քաղաքականության վարում ինչպես Հայաստանի ռազմավարական գործընկերոջ՝ Ռուսաստանի (ՀԱՊԿ), այնպես էլ Արեւմուտքի (ԱՄՆ, ՆԱՏՕ, ԵՄ) հետ:

Մեկ այլ հիմնախնդիր են ներքին մարտահրավերները, որոնք անհնար է լուծել առանց էֆեկտիվ պետության: Երկու անգամ՝ 1999թ. հոկտեմբերին խորհրդարանում քաղաքական առաջնորդների սպանությունից եւ 2008թ. մարտին «գունավոր հեղափոխություն» իրականացնելու արմատական ընդդիմության փորձից հետո Հայաստանը հայտնվել է խիստ բարդ իրադրությունում: Կասկած չի հարուցում, որ այս ճգնաժամերի կարգավորումն անհնար կլիներ առանց պետական կառույցների եռանդուն միջոցառումների:

Բայց հայոց պետականության ամրապնդման խնդիրը հրատապ է ոչ միայն արտաքին ու ներքին սպառնալիքների ֆոնին: Սփյուռքի համախմբումն ազգային շահերի համատեքստում, նույնիսկ այն դեպքում, երբ կազմակերպման ցանցակենտրոն համակարգն օպտիմալն է համարվում, նույնպես ենթադրում է գաղափարախոսական կենտրոնի առկայություն, որը պետք է եւ կարող է լինել միայն ուժեղ հայկական պետությունը (թեկուզեւ նրա համար, որ այլընտրանք առայժմ գոյություն չունի):

Թվարկված գործոնները պարզապես հարկադրում են Հայաստանին ունենալ էֆեկտիվ պետություն՝ առավելագույն մոբիլիզացված ռեսուրսներով եւ ինքնիշխանության բարձր մակարդակով:

**ԹՈՒՐՔԻԱՅԻ ԷԹՆՈՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ԱՐԴԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐՋ  
*Ռուբեն Մելքոնյան***

Ինչպես Օսմանյան կայսրությունում, այնպես էլ Թուրքիայի Հանրապետությունում ներքին քաղաքականության մեջ էթնիկական ուղղվածությունը միշտ էլ կարելու տեղ է զբաղեցրել: Միեւնույն ժամանակ հարկ է նկատել, որ թուրքական էթնոքաղաքականությունը սուր եւ ագրեսիվ բնույթ է ստացել հատկապես այն պատճառով, որ պետական քաղաքականության գերնպատակը եւ օբյեկտիվ իրականությունը լրջորեն հակասում են իրար: Այսպես, Օսմանյան կայսրության եւ Թուրքիայի նման բազմէթնիկ պետություններում նպատակ էր դրված ստեղծել միատարր թուրք-մուսուլմանական հասարակություն, որին հասնելու համար ընտրված էր առանձին ազգերի ուժացման եւ բնաջնջման ճանապարհը:

Թուրքիայի Հանրապետության էթնոքաղաքականությունը հենց սկզբից ընդունեց ագրեսիվ բնույթ, եւ դա ամենացայտուն կերպով արտացոլվեց Հայոց ցեղասպանությունն իրագործելու հարցում թուրքերի նախկին դաշնակիցների՝ քրդերի պարագայում: Այսպես, հայտնի է, որ թուրքական հանրապետությունում երկար տասնամյակներ չէր ընդունվում անգամ քուրդ ազգի, քրդերեն լեզվի գոյության հարցը: Հետագայում՝ քրդական հարցի սրվելուն զուգընթաց, որոշակի փոփոխությունների եւ վերածելակերպումների ենթարկվեց նաեւ պետության քաղաքականությունը:

2002թ. իշխանության եկած Արդարություն եւ զարգացում կուսակցությունը քրդերի նկատմամբ վարում է ուժերի պառակտման, ջլատման քաղաքականություն: Թուրքական իշխանություններին հաջողվել է որոշակի սեպ խրել քրդական տարբեր շրջանակների միջեւ: Մասնավորապես, Թուրքիայում զինյալ քրդերը բաժանված են երկու ճամբարի՝ իշխանամետներ («քորուջու» անվամբ) եւ ընդդիմադիրներ՝ ի դեմս Քրդական բանվորական կուսակցության: Ավելորդ չէ նկատել, որ այս հարցում եւս թուրքական քարոզչամեքենան փորձում է օգտագործել հասարակության մեջ առկա հակահայկական տրամադրությունները, եւ ժամանակ առ ժամանակ թուրք ամենատարբեր գործիչներ հանդես են

գալիս հայտարարություններով, որ իբրեւ թե Քրդական բանվորական կուսակցությունը հայկական կազմակերպություն է:

Բացի այդ, այսօր Թուրքիայի քաղաքական դաշտում գոյություն ունեն իշխանամետ ու ընդդիմադիր քուրդ քաղաքական գործիչներ, որոնք տարբեր հարցերի շուրջ ունեն, երբեմն, հակասական մոտեցումներ: Թուրքիայի պետական կառավարման համակարգում իշխող կուսակցության կողմից քրդերի ներառումը, տնտեսական ոլորտում որոշ արտոնությունների տրամադրումը էլ ավելի մեծ թվով քրդերի է բերել դեպի իշխանական դաշտ: Ավելորդ չէ նկատել նաեւ, որ իշխող կուսակցության խորհրդարանական խմբակցությունում ընդգրկված պատգամավորների մոտ 30 տոկոսը նույնպես էթնիկ քրդեր են, իսկ Թուրքիայի արեւելյան շրջաններում Արդարություն եւ զարգացում կուսակցության տարածքային ղեկավարների շարքում տեղ են զբաղեցնում քրդերը: Այս եւ նմանատիպ այլ քայլերով թուրքական իշխանություններին հաջողվել է որոշակի ջլատում մտցնել քրդական հասարակությունում:

Վերջին շրջանում թուրքական իշխանությունների, հատկապես երկրի արեւելյան, առավել քրդաբնակ շրջաններում վարած էթնոքաղաքականության մեջ նկատվում են նոր, հետաքրքիր եւ միեւնույն ժամանակ վտանգավոր միտումներ:

Այսպես, քրդական պահանջատիրության կարեւոր կռվաններից է համարվում այն, որ Թուրքիայի արեւելյան որոշ շրջաններում նրանք կազմում են բացարձակ մեծամասնություն եւ, ըստ էության, այդ շրջանները միատարր, այն է՝ քրդական են: Իհարկե, այս վիճակը ստեղծվել է օսմանյան իշխանությունների վարած ցեղասպանական քաղաքականության հետեւանքով, երբ այդ տարածքի բնիկները՝ հայերը, բնաջնջվեցին կան ուժացվեցին: Ներկայումս, սակայն, թուրքական իշխանությունները փորձում են կասկածի տակ դնել այդ տարածքների «միատարր քրդական» լինելը եւ այդ նպատակին հասնելու համար ձգտում են օգտագործել բռնի իսլամացված հայերի հանգամանքը:

Արդեն որոշ ժամանակ է, ինչ թուրքական մամուլում թուրք պաշտոնական պատմաբանների կողմից շրջանառվում է այն միտքը, թե Թուրքիայի արեւելյան շրջաններում կան բազմաթիվ կրոնափոխ հայեր: Անշուշտ, այս փաստը թուրքական որոշակի կառույցներին հայտնի էր վաղուց, եւ նրանք ամեն կերպ ձգտել են վերահսկել ու վերջնական ուժացման հասցնել հայության այդ բեկորներին: Չհասնելով լիակատար

հաջողության այս հարցում՝ թուրքական իշխանությունները ներկայումս փորձում են այդ իրողությունից օգուտներ քաղել: Մասնավորապես՝ այս համատեքստում պետք է դիտել այն երեւոյթը, որ թուրքական իշխանությունների առնվազն լուռ համաձայնության պայմաններում տեղի են ունենում պատմական Հայաստանի տարբեր վայրերում բնակվող բռնի կրոնափոխ հայության ինքնակազմակերպման, ակտիվացման փորձեր (օրինակ՝ Դերսիմի պարագայում): Սա մեզ համար իրականում ուրախալի զարգացում է, սակայն հարկ է դիտարկել նաեւ այս խնդրի մյուս բաղադրիչները:

Ակտիվացնելով պատմական Հայաստանում գոյատեւած հայության բեկորների թեման՝ թուրքական իշխանությունները փորձում են դա եւս ծառայեցնել այն նպատակին, որ այդ շրջանները «միատարր քրդական» չեն եւ կան նաեւ այլ էթնիկ խմբեր: Կարծում են, որ այս նույն հարցի համատեքստում որոշակի տեղ կարող են ունենալ նաեւ հայկական եկեղեցիների վերանորոգման փորձերը: Այս ամենը կարող է նաեւ լարում մտցնել քրդերի եւ կրոնափոխ հայերի հարաբերություններում եւ հանգեցնել անկանխատեսելի հետեւանքների, քանի որ քրդերը, միգուցե, սկսեն նրանց դիտել իբրեւ մրցակիցներ:

Այս պահին, սակայն, պետք է նկատել, որ հայկական ներկայության վերագարթոնքի աննշան փորձերը դրական են գնահատվում եւ, երբեմն, նաեւ քաջալերվում են քրդական միջավայրում եւս, սակայն հարկ է նաեւ հաշվի առնել հավանական վտանգավոր զարգացումները:

Շարունակելով էթնոքաղաքականության արդի միտումների վերլուծությունը՝ պետք է նկատենք, որ թուրքական իշխանությունները Ստամբուլում եւ այլուր հայկական ներկայությունն էլ փորձում են հավասարակշռել եւ սահմանափակել ասորական գործոնով: Թուրքական իշխանությունները ձգտում են որոշակի ուղղորդումներ կատարել քանակային առումով երկրորդ քրիստոնյա համայնքի՝ ասորիների եւ հայերի հարաբերություններում: Մասնավորապես՝ ամբարի եւ արիեստների որոշ ճյուղերում հայ-ասորական լուռ մրցակցությունը հանգեցրել է նրան, որ այսօր Ստամբուլում ոսկերչության եւ արծաթագործության ոլորտից հայերն աստիճանաբար դուրս են մղվում եւ նրանց տեղը զբաղեցնում են ասորիները: Թուրքական պետության վերաբերմունքի վերջին խոսուն օրինակ կարող ենք համարել այն, որ պաշտոնապես 7000 հոգի հաշվվող ասորական համայնքից խորհրդարանական ընտրություններում ընտրվեց մեկ պատգամավոր, իսկ շուրջ 60 հազարանոց հայ համայնքին, ըստ էության, դա չհաջողվեց կամ չարտոնվեց:

Ամփոփելով կարող ենք նշել, որ առկա փաստերը թույլ են տալիս պնդել, որ այսօր թուրքական էթնոքաղաքականության հիմնական միտումներից պետք է համարել տարբեր էթնիկ խմբերի շահերը միմյանց հակադրելու միջոցով հավասարակշռություն պահելու ձգտումը: Թուրքիայի վարած էթնոքաղաքականության խնդիրների մասին վերջերս արտահայտվեց նաև նախագահ Աբդուլա Գյուլը. *«էթնիկ, մշակութային եւ կրոնական տարբերությունները կարող են հասարակության պառակտման եւ լարվածության պատճառ դառնալ, սակայն պետությունը պետք է ընդունակ լինի դեկավարել իրավիճակը»:*

Այսպիսով՝ կարող ենք ասել, որ էթնիկական ուղղվածությունը շարունակում է կարելուր տեղ զբաղեցնել թուրքական ներքին քաղաքականության մեջ, եւ նկատվող նոր միտումները երբեմն արտաքուստ թողնում են դրական տպավորություն, բայց միեւնույն ժամանակ չպետք է բացառել դրանցում առկա որոգայթներն ու վտանգները:

## **ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՍՐԱՑՈՒՄԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ Հայկ Գաբրիելյան**

Վերջին երկու ամիսներին Թուրքիայի ներքաղաքական իրավիճակը նշանավորվեց քաղաքացիական իշխանություն – զինվորական հրամանատարություն առճակատման եւ Քրդական հարցի սրացմամբ, ինչն իր հերթին հանգեցրեց Թուրքիայի Հանրապետության (ԹՀ) պատմության ընթացքում մի շարք աննախադեպ իրադարձությունների:

### **Քաղաքացիական իշխանություն – զինվորական հրամանատարություն առճակատում**

2011 թվականի հունիսի 12-ին Թուրքիայում տեղի ունեցած խորհրդարանական ընտրություններից հետո շարունակվեց քաղաքացիական իշխանությունների ու զինվորական հրամանատարության միջեւ պայքարը, որն աստիճանաբար նոր թափ հավաքեց: Պատճառը «Էրգենեքոն» եւ «Բալլոզ» գործերի շրջանակներում թուրք բարձրաստիճան զինվորականների շարունակական ձերբակալություններն էին, որոնք մեղադրվում էին ահաբեկչական գործունեություն ծավալելու եւ գործող կառավարությունը տապալելու փորձ ձեռնարկելու մեջ:

Օգոստոսի 1-ին մեկնարկած Թուրքիայի Բարձրագույն ռազմական խորհրդի (ԲՌԽ) նիստից առաջ՝ հուլիսին, Թուրքիայի զինված ուժերի (ԹՁՈՒ) Գլխավոր շտաբի (ԳՇ) պետ, գեներալ Սերահաթթին Ըշըք Քոչաները մի շարք դռնփակ հանդիպումներ ունեցավ վարչապետ Ռեջեփ Էրդողանի ու նախագահ Աբդուլա Գյուլի հետ, որոնցում արժարժեք բանտում գտնվող 41 թուրք գեներալների հարցը: Բարձրագույն զինվորական հրամանատարությունը (ԲՁՀ) պնդում էր, որ քանի դեռ դատավճիռը չի կայացվել ու հետեւաբար՝ չի կարելի խոսել գեներալների մեղավորության մասին, նրանք պետք է մասնակցեն ԲՌԽ-ի նիստին: Մինչդեռ քաղաքացիական իշխանությունն իր հերթին պնդում էր, թե ճաղերի հետեւում գտնվելը եւ հետաքննությունն արդեն իսկ բացառում են ԲՌԽ-ի առաջիկա նիստին նրանց մասնակցելը:

Ձինվորական հրամանատարությանը բավական զայրացրեց այն, որ երբ Թուրքիայում ահաբեկչական հռչակված ու արգելված Քրդստանի աշխատավորական կուսակցության (PKK) զինյալները Դիարբեքիրի նահանգում սպանեցին մեկ տասնյակից ավելի զինծառայողների, Էրդո-

ղանը հրահանգեց ստեղծել Ներքին գործերի նախարարության հատուկ հանձնաժողով՝ այդ միջադեպի հետաքննման համար: Այստեղ ուշագրավն այն է, որ նախկինում բանակում գրանցված նմանատիպ ծանր դեպքերը սովորաբար հետաքննում էր միայն ռազմական դատախազությունը: Իսկ ահա դրանում քաղաքացիական հետաքննիչ մարմինների ներգրավումը մի շարք փորձագետների կողմից որակվեց որպես զինվորականների հետաքննության հանդեպ ցուցաբերած անվստահության նշան:

Չնայած Սիլվանի դեպքերի վերաբերյալ ռազմական ու քաղաքացիական հանձնաժողովների պաշտոնական հետաքննության արդյունքների համընկնմանը՝ դա նստվածք թողեց ԲԶՅ-ում: Հուլիսի 28-ին Էրդողանը հայտարարեց, որ ԲՈՒՄ-ի առաջիկա նիստում բոլոր որոշումներն ընդունվելու են օրենքով սահմանված կարգով, իսկ դրա հաջորդ օրը Գյուլը հայտարարեց, որ «փակ աչքերով» չի ստորագրելու որեւէ նշանակում: Դրանով իշխող Արդարություն ու զարգացում կուսակցությունը (ԱԶԿ) հասկացրեց, որ «կանաչ լույս» չի վառելու «Բալոզ»-ի գործում շրջանառվող բարձրաստիճան զինվորականների նոր նշանակումների առջև: Բացի այդ, հուլիսի 29-ին Ստամբուլի դատախազությունը ձեռնամուխ եղավ ԲԶՅ-ի հրահանգով հակակառավարական կայքերի ստեղծման գործի քննմանը, որի շրջանակներում շրջանառվում են 22 բարձրաստիճան սպաների (այդ թվում նաեւ մի շարք գեներալների) անուններ: Դրանց թվում է նաեւ Ռազմական ակադեմիաների պետ, գեներալ Բիլգին Բալանլըն, որը «Բալոզ»-ի գործի շրջանակներում ձերբակալվել է դեռեւս մայիսի վերջին, եւ որը պետք է դառնար ռազմաօդային ուժերի հրամանատար: Ի դեպ, նա «Բալոզ»-ի գործով ձերբակալված ամենաբարձրաստիճան գործող սպան է:

Տեսնելով զիջումների չգնալու ԱԶԿ-ի ցանկությունը՝ ԲԶՅ-ն գնաց աննախադեպ քայլի. հուլիսի 29-ին հրաժարական տվեցին ԳՇ պետ Ըշըք Քոշաները, ցամաքային զորքերի հրամանատար Էրդալ Ջեյլանօղլուն, ռազմաօդային ուժերի հրամանատար Հասան Աքսայը եւ ռազմածովային ուժերի հրամանատար Էշրեֆ Ուղուր Յիդիթը: ԲԶՅ-ից հրաժարական չտվեց միայն ժանդարներիայի հրամանատար, գեներալ Նեջդեթ Օզելը, որն անմիջապես ստանձնեց ԳՇ պետի ժամանակավոր պաշտոնակատարի դերը՝ նշանակվելով ԳՇ պետի տեղակալ: Ի դեպ, նա հայտնի է «Քիմիական Նեջդեթ» մականվամբ, քանի որ 1999 թվականին քիմիական զենք է կիրառել քրդերի նկատմամբ:

ԲԶՅ-ի հրաժարականի հետ կապված՝ Գյուլը հայտարարեց. «Երկրում տեղի են ունեցել արտակարգ իրադարձություններ, սակայն ճգնաժամ գոյություն չունի: Երկրում իրադարձությունները զարգանում են իրենց

հունով: Մենք հարգանքով են ընդունում ԳՇ պետի որոշումը, թեև ցանկանում ենք, որ նա շարունակի իր զինծառայությունը»:

Հրաժարականից հետո Քոչաներն իր քայլը հիմնավորեց վերջին տարիներին զինվորականների դեմ մղվող կամպանիային հակազդելու սեփական անզորությամբ. «Ներկայումս ձերբակալված զինվորականների թիվը կազմում է 250, որոնցից 77-ը պաշտոնաթող են: Այլևս անհնար էր հաշտվել այդ ապօրինությունների հետ: Մամուլում ամեն տիպի կեղծիքների ու ստերի տարածման միջոցով հասարակական կարծիք են ձեւավորում՝ զինված ուժերի ղեկավարությունը ներկայացնելով որպես հանցախումբ: Ինձ համար անհնար էր դարձել այս բարձր պոստում գտնվելը (դեռ 2 տարի կար), քանի որ ես՝ որպես ԳՇ պետ, ի վիճակի չեմ պաշտպանել իմ ենթակաների իրավունքները»:

Թուրքական ընդդիմությունը կտրուկ արձագանքեց ԲԶՀ-ի հրաժարականին: Ժողովրդա-հանրապետական կուսակցությունը (ԺՀԿ) հայտարարեց, որ տեղի ունեցածը ցույց է տալիս, որ ԱԶԿ-ն շարունակում է անտեսել իրավունքն ու գործող օրենսդրությունը, իսկ Ազգայնական շարժում կուսակցության (ԱՇԿ) նախագահ Դեւլեթ Բահչելին այդ իրադարձությունները որակեց որպես «պետական լուրջ ճգնաժամ»:

ԲԶՀ-ի հրաժարականից հետո թուրքական ՁԼՄ-ները վերհիշեցին Թուրքիայում ամենասարսափահարույց թերթի համբավ ունեցող «Թարաֆ»-ի մեկնաբան Էմրե Ուսլուի՝ խորհրդարանական ընտրությունների նախաշեմին հրապարակած սկանդալային հոդվածը, որում նա վստահեցնում էր, թե խորհրդարանական ընտրություններում ԱԶԿ-ի հաղթանակի դեպքում ԳՇ պետ Ըշըք Քոչաները հրաժարական է տալու:

Սակայն ամերիկյան EurasiaNet-ը գրեց, որ ԲԶՀ-ի հուլիսի 29-ի դեմարշը չհասավ իր նպատակին. «Սկզբնական շրջանում ՁԼՄ-ները թուրքական գեներալիտետի ներկայացուցիչների հրաժարականների շարքը որակեցին որպես «երկրաշարժ» եւ «իսկական ռումբ»: Սակայն երկար ժամանակ Թուրքիայի քաղաքական կյանքում զգալի դեր խաղացած թուրք գեներալներին չհաջողվեց հեռանալիս իրենց հետեւից շրխկացնել դուռը: Արդեն օգոստոսի 1-ին երկիրը հաղթահարեց զինվորական շրջանակների մանելը եւ սկսեց հանգիստ ընթանալ իր ճանապարհով, ֆինանսական շուկաները պահպանեցին կայուն իրավիճակ, իշխող ԱԶԿ-ի գլխավորած կառավարությունը չցնցվեց»:

ԲԶՀ-ի հրաժարականի հետ կապված՝ Փենսիլվանիայի Լիհայի համալսարանի փորձագետ Յենրի Բարկին նշեց. «Դա ոչ թե ճգնաժամ է, այլ բեկումնային պահ: Յետ նայելով մարդիկ կասեն, որ դա հենց այն պահն է, երբ թուրքական բանակը վերջնականապես անցավ քաղաքա-

ցիական վերահսկողության ներքո»: Ստամբուլի Բիլգի համալսարանի քաղաքագետ Սուլի Օզելը հայտարարեց, որ տվյալ միջադեպը վերջակետ դրեց քաղաքականությունում զինվորականների ունեցած ազդեցության վերաբերյալ դեբատներին: Ստամբուլաբնակ լրագրող Դորիան Ջոնսի կարծիքով՝ Թուրքիայի բնակիչներից միայն քչերը չեն համաձայնի այն բանի հետ, որ ԲԶՀ-ի հրաժարականը վարչապետ Էրդողանին վճռական հաղթանակ բերեց զինվորականների նկատմամբ:

Օգոստոսի 1-4-ը տեղի ունեցավ ԲՌԽ-ի նիստը, որին ԹՀ պատմության ընթացքում առաջին անգամ չէր մասնակցում ԲԶՀ-ն՝ ԳՇ պետը եւ ցամաքային, ռազմաօդային ու ռազմածովային ուժերի հրամանատարները: Նիստին ավանդական 14 գեներալներից մասնակցում էր միայն 9-ը, քանի որ նրանցից 4-ը նիստից առաջ հրաժարական էր տվել, իսկ գեներալ Բալանըն ձերբակալված էր: ԲՌԽ-ի նիստի արդյունքներն օգոստոսի 4-ին հաստատվեցին նախագահ Գյուլի կողմից: ԳՇ պետ նշանակվեց Նեշդեթ Օզելը, ցամաքային զորքերի հրամանատար՝ Հայրի Քըվրքքօղլուն, ռազմածովային ուժերի հրամանատար՝ Էմին Մուրաթ Բիլգելը, ռազմաօդային ուժերի հրամանատար՝ Մեհմեթ Էրթելը, իսկ ժամդարմերիայի գլխավոր հրամանատար՝ Բեքիր Քալյոնջուն: Բացի այդ, ԲՌԽ-ի նիստում բարձրացվեց 36 գեներալի ու ծովակալի կոչում, իսկ 49 գնդապետի շնորհվեց գեներալի ու ծովակալի կոչում: ԲՌԽ-ի նիստում որոշվեց մեկ տարով հետաձգել «Բալոզ»-ի գործում ներառված 14 գեներալներին թոշակի ուղարկելու հարցը: Դա ԱՁԿ-ի զիջումն էր՝ ուղղված նորանշանակ ԳՇ պետի դիրքերի ամրագրմանը:

ԲՌԽ-ի նիստի հետ կապված՝ թուրքական ՋԼՄ-ներն ու մի շարք փորձագետներ նշեցին, որ այն ի ցույց դրեց գեներալիտետի նկատմամբ Էրդողանի տարած լիակատար հաղթանակը: Մասնավորապես, թուրքական ՋԼՄ-ներն ուշադրություն հրավիրեցին այն հանգամանքի վրա, որ նիստում Էրդողանը միայնակ էր նստած սեղանի վերնամասում՝ նիստի նախագահողի աթոռին: Նրանք հիշեցնում էին 2010 թվականի նոյեմբերի 30-ին տեղի ունեցած ԲՌԽ-ի նիստը, որի ժամանակ սեղանի վերնամասում, Էրդողանից բացի, նստած էր նաեւ ԳՇ պետ Քոշաները: Փոխվարչապետ Բյուլենթ Արընչն այս կապակցությամբ նշեց. «Այդպես էլ պետք է լիներ, մեկ գյուղում երկու գյուղապետ չի լինում»:

Ուշագրավն այն է, որ առաջին անգամ բոլոր նորանշանակ զորահրամանատարները ներկայացնում են թուրքական ռազմական ակադեմիաները: Նախկինում այդ պաշտոնները զբաղեցնում էին ամերիկյան ու եվրոպական ռազմական բուհերի շրջանավարտները: Նրանք լիովին չեզոք են տրամադրված ներկայիս իշխանությունների հանդեպ, ինչը

վարչապետի ու նախագահի կողմից նրանց նշանակման համար վճռորոշ է եղել: Փաստորեն, ԹՅ պատմության մեջ աննախադեպ էր այն, որ քաղաքացիական իշխանությանը հաջողվեց իր թեկնածուներին դնել զինվորական ղեկավար պոստերում:

Աննախադեպ իրադարձություն գրանցվեց նաև օգոստոսի 30-ին՝ Յաղթանակի (միաժամանակ նաև ԹԶՈՒ) տոնի ժամանակ: Առաջին անգամ այն ընդունեց ոչ թե ԳՇ պետը, այլ՝ երկրի նախագահը: Յատկանշական է, որ նախկինում այդ տոնը նշվել է ԳՇ-ի՝ հյուրերի համար նախատեսված դահլիճում, եւ այն ավանդաբար ընդունել է «տանտերը»՝ ԳՇ պետը: Մինչդեռ այս դեպքում ԹՅ պատմության մեջ առաջին անգամ դա ընդունեց երկրի նախագահ Աբդուլա Գյուլը՝ որպես «գերագույն գլխավոր հրամանատար»: Յենց նա կանգնեց Թուրքիայի երկու դրոշների մեջտեղում՝ ընդունելով Յաղթանակի տոնին առնչվող նախարարների եւ բարձրաստիճան զինվորականների շնորհավորանքները: Դրանով Աբդուլա Գյուլը դարձավ Թուրքիայի պատմության մեջ առաջին «գերագույն գլխավոր հրամանատարը»: Ի դեպ, Յաղթանակի տոնից առաջ ԳՇ պետ Նեջդեթ Օզելը Գյուլին առաջարկել էր համատեղ ընդունել այն, սակայն Գյուլը մերժել էր նրան:

Զինվորականների դեմ Էրդողանի տարած հաղթանակի մասին է վկայում նաև այն, որ սեպտեմբերի սկզբին Բարձրագույն ուսումնական խորհուրդն (ԲՈՒԽ) ընդունեց երկրի միջին ու բարձրագույն կրթական հաստատություններում գործող մուսուլմանական գլխաշոր կրելու արգելքի վերացման մասին որոշում: Էրդողանը բուհերում գլխաշորի արգելքի վերացման հարցի շուրջ առաջին անգամ պաշտոնապես խոսել է 2007 թվականի սեպտեմբերին՝ դա դիտարկելով որպես հասարակության ժողովրդավարացմանն ուղղված քայլ եւ ընդգծելով, որ թուրք կանանց 2/3-ը գլխաշոր է կրում, սակայն շատ թուրք կանայք բարձրագույն կրթություն չեն ստանում համալսարաններում գործող այդ արգելքի պատճառով: Մինչդեռ երկրի աշխարհիկ ընտրանին՝ ներառյալ գեներալները, դատավորներն ու համալսարանների ռեկտորները, կարծում են, որ ուսումնական հաստատություններում գլխաշոր կրելու արգելքը չափազանց կարեւոր է՝ կրոնից պետության անջատման պահպանման համար:

Յարկ է նշել, որ 2002 թվականի նոյեմբերին ԱԶԿ-ի իշխանության գալուց հետո Էրդողանն ամեն գնով պայքարում է ԹՅ հիմնադիր Քեմալ Աթաթուրքի կանխորոշած երկրի աշխարհիկ ռեժիմի հիմնական պահպանման հանդիսացող զինվորականների ազդեցության նվազեցման ուղղությամբ եւ փայլուն հաջողություններ է արձանագրել այստեղ՝

այդ նպատակին ծառայեցնելով նաեւ ԵՄ-ի կողմից պահանջվող բարեփոխումները: Դա հանգեցրեց նրան, որ վերջին շրջանում Երդողանը սկսեց հաջողությամբ ձերբակալել տալ գործող ու պաշտոնաթող գեներալների, ինչի մասին ընդամենը 10 տարի առաջ Թուրքիայում չէին կարող անգամ երազել:

### **Քրդական հարց**

Այն պայմանավորված է PKK-ի զգալի ակտիվացմամբ եւ քրդական խաղաղություն եւ ժողովրդավարություն կուսակցության (ԽԺԿ) նորընտիր պատգամավորների խորհրդարանական բոյկոտի շարունակմամբ: Վերջին 2 ամիսներին զգալիորեն ակտիվացնելով իր գործունեությունը՝ PKK-ն նոր մարտավարություն է որդեգրել՝ կենտրոնանալով զուտ Թուրքիայի ուժային կառույցների ներկայացուցիչներին (զինվորական ու ոստիկան) կորուստներ պատճառելու վրա: PKK-ն շարունակում է սպանել, վիրավորել ու առեւանգել նրանց, ինչպես նաեւ քաղաքացիական անձանց: Մի շարք դեպքերում PKK-ի տեղադրած ականների վրա պայթեցին թուրքական զինվորական ավտոշարասյուներն ու զինծառայողներին տեղափոխող քաղաքացիական փոխադրամիջոցները: PKK-ն նաեւ տնտեսական լուրջ վնասներ պատճառեց թուրքական պետությանը՝ Էյազըղում ու Մուշում պայթեցնելով բեռնատար գնացքներ եւ հատկապես Թավրիզ–Էրզրում գազատարն ու Քիրքուք–Յունուրթալըք նավթամուղը:

Այս խողովակաշարերի պաշտպանության համար Թուրքիայի էներգետիկայի ու ներքին գործերի նախարարությունները ստիպված եղան հատուկ պլան մշակել: Առաջնայինը համարվում են միջազգային նշանակություն ունեցող խողովակաշարերը. Բաքու–Թբիլիսի–Ջեյհան, Քիրքուք–Յունուրթալըք (Ջեյհան) նավթամուղները եւ Բաքու–Թբիլիսի–Էրզրում, Թավրիզ–Էրզրում (Անկարա), «Երկնագույն հոսք» գազամուղները: Ուշագրավ է, որ նախորդ տարի էլ քուրդ զինյալների կողմից խողովակաշարերի նկատմամբ իրականացված խափանարար գործողություններից հետո Թուրքիայում վճռվել էր այդուհետ խողովակաշարերի պաշտպանությունը դնել իսրայելական արտադրության «Չերոն» անօդաչու հետախուզական ինքնաթիռների վրա, ինչը փաստորեն չարդարացրեց իրեն:

Թուրքական բանակն ամենամեծ կորուստները կրեց հուլիսի 14-ին եւ օգոստոսի 17-ին: Յուլիսի 14-ին Դիարբեքիրի նահանգի Սիլվան շրջանում տեղի ունեցած բախման ժամանակ PKK-ի զինյալները

սպանեցին 13 եւ վիրավորեցին 7 թուրք զինծառայողների: Բախման հետեւանքով զոհվեց նաեւ 7 PKK-ական: Իսկ օգոստոսի 17-ին Յաքքարի–Չուքուրջա ճանապարհով անցնող զինվորական ավտոշարասյունը պայթեց PKK-ի տեղադրած 4 ականների վրա, ինչից հետո ենթարկվեց PKK-ականների հրթիռակոծմանը: Այս անգամ զոհվեց 8 եւ վիրավորվեց 9 զինծառայող:

Սիլվանի բախման օրը՝ հուլիսի 14-ին, Դիարբեքիրում տեղի ունեցավ քրդական Դեմոկրատական հասարակության կոնգրեսի (ԴՀԿ) արտակարգ համագումարը, որը տեւեց 6 ժամ: Դրանում հայտարարվեց Թուրքիայի կազմում քրդական «ժողովրդավարական ինքնավարության» ստեղծման մասին: ԴՀԿ համանախագահ Այսել Թուլլուքը համագումարից հետո հայտարարեց. «Քուրդ ժողովուրդը հռչակել է իր ինքնավարությունը՝ հավատարիմ մնալով Թուրքիայի ազգային միասնությանն ու տարածքային ամբողջականությանը: Քրդական հարցը կարելի է լուծել միայն քուրդ ժողովրդին առանձին ու իրավահավասար խումբ ճանաչելով»:

Յարկ է նշել, որ քրդական ինքնավարության հռչակման նախագիծն առաջին անգամ ներկայացվել էր նախորդ տարվա դեկտեմբերին՝ Դիարբեքիրի կոնֆերանսում: Թուրքական կողմը մտահոգ է, որ ինքնավարության հռչակմանը կարող են հաջորդել քրդերենն ազգային լեզու հռչակելը եւ մի շարք պետական ատրիբուտների, օրինակ՝ դրոշի ի հայտ գալը: Այդ ամենն ի վերջո կարող է հանգեցնել քրդական անկախ պետության ստեղծմանը եւ թուրքական պետության մասնատմանը: Թուրքական դատարանն արդեն ձեռնամուխ է եղել «ժողովրդավարական ինքնավարության» գործի քննմանը:

Սիլվանի բախումից հետո Էրդողանը հայտարարեց. «Ահաբեկչական-անջատողական խմբավորումների նկատմամբ համբերատարություն դրսևորվում է միայն սուրբ ամիսներին: Դանակն արդեն հասել է ոսկորին, Ռամադանից հետո մենք կդիմենք կոշտ միջոցների»:

Սիլվանից հետո Թուրքիայի Ազգային մեծ ժողովում (ԹԱՄԺ) ներկայացված քաղաքական հիմնական ուժերը՝ ԱԶԿ-ն, ԺՀԿ-ն ու ԱՇԿ-ն, ընդհանուր փաստաթուղթ ստորագրեցին՝ ընդդեմ ահաբեկչության: Փաստաթղթում նշված է. «Ոչ մի ուժ չի կարող ցնցել թուրքական պետության ամբողջականությունը: Մենք ԹԱՄԺ-ում կկանգնենք կողք կողքի՝ ահաբեկչության ու անջատողական ուժերի դեմ պայքարի եւ թուրքական պետության ազգային անվտանգության ապահովման համար: Ահաբեկչության դեմ թուրքական պետության պայքարը կրում է ժողովրդավարական, օրինական ու իրավական բնույթ»:

Իսկ Չուբուրջայի միջադեպի հաջորդ օրը տեղի ունեցավ Ազգային անվտանգության խորհրդի (ԱԱԽ) մոտ 5 ժամանոց նիստ: Դրանում հայտարարվեց, որ PKK-ի դեմ պայքարի համար մշակվելու է նոր մարտավարություն, ինչպես նաև ժողովրդավարական ու իրավական պետությանը հավատարիմ հասարակության բոլոր շերտերին կոչ արվեց դատապարտել PKK-ի գործունեությունը: Աբդուլա Գյուլը նիստում հանդես եկավ 2 նախաձեռնությամբ. դրանցից մեկի համաձայն՝ ԱԱԽ-ի նիստերում բարձրաստիճան զինվորականներն ու կառավարության անդամները պետք է խառը նստեն, իսկ մյուսի համաձայն՝ այսուհետ ԱԱԽ-ի ընդունած որոշումների մասին երկրի նախագահը պետք է իրազեկի ԹԱՄԺ-ի խոսնակին (Ջեմիլ Չիչեք) ու հիմնական ընդդիմադիր ուժի ղեկավարին (Քեմալ Քըլըչդարողլու):

ԱԱԽ-ի նիստում ԽԺԿ-ին ակնարկեցին հեռավորություն պահպանել PKK-ից: Բացի այդ, Էրդողանը հրաժարվեց հանդիպել ԽԺԿ-ի ներկայացուցիչների հետ, եւ դա այն դեպքում, երբ ավանդաբար իշխող կուսակցության ներկայացուցիչը Ռամադանի ժամանակ հանդիպում է բոլոր ընդդիմադիր կուսակցությունների ներկայացուցիչների հետ: ԱԶԿ-ն հասկանալ է տվել, որ երկխոսություն սկսելու համար ԽԺԿ-ն պետք է խորհրդարանում երդում տա եւ միանշանակ դատապարտի PKK-ի գործողությունները:

PKK-ի արյունալի գործողություններն աստիճանաբար այնպիսի թափ հավաքեցին, որ Թուրքիայի ռազմական ու քաղաքական ղեկավարությունը ստիպված եղավ հրաժարվել Ռամադանի ժամանակ PKK-ի դեմ ուժային գործողություններ չիրականացնելու մոտեցումից: Էրդողանը հայտարարեց, որ Ռամադանի հետ կապված իրենց համբերությունը հատել է եւ գործելու ժամանակն է, իսկ Գյուլն իր հերթին մշեց, որ բոլորը պետք է իմանան, որ չկան պետությունից զորեղ ուժեր, եւ ահաբեկիչները կտեսնեն պետության ուժը:

Չուբուրջայի բախման օրը՝ օգոստոսի 17-ին, թուրքական ավիացիան հարվածներ հասցրեց Յյուսիսային Իրաքի սահմանային շրջաններում գտնվող PKK-ի դիրքերին, ինչը շարունակվեց նաև հետագայում: Նույն օրը Ստամբուլի դատարանը «PKK-ին աջակցելու» համար Օջալանին 1 տարի ժամկետով արգելեց հանդիպումներ ունենալ իր փաստաբանների հետ<sup>1</sup>:

Օգոստոսի վերջին տրանսպորտի նախարար Բինալի Յըլդըրընը հայտնեց, որ 1984-2011 թվականներին PKK-ի դեմ մղած 27-ամյա պայքարում Թուրքիայի ուղղակի ծախսերը կազմել են 300 միլիարդ դոլար: Սակայն անուղղակի ծախսերը շատ ավելի մեծ են՝ 700 միլիարդ դոլար:

Ընդհանուր առմամբ, PKK-ի դեմ 27-ամյա պայքարը Թուրքիայի վրա նստել է 1 տրիլիոն դոլար<sup>2</sup>:

Այսպիսով, «Քրդական հարցի» կարգավորումը շարունակում է մնալ մշուշոտ, իսկ թուրքական կառավարությունը չունի դրա լուծման հստակ պլան:

<sup>1</sup> Հունիսի 20-ին Մարմարա ծովի Իմրալը կղզում ցմահ ազատագրվում կրող քուրդ առաջնորդ, PKK հիմնադիր Աբդուլա Օջալանն իր փաստաբանների միջոցով հայտարարություն տարածեց, թե ինքը միակ մարդն է, ով կարող է վերջ դնել Թուրքիայի ու PKK-ի միջև երեսնամյա պայքարին. «Մենք ցանկանում ենք վայր դնել մեր զենքերը: Ինձանից բացի ոչ ոք չի կարող PKK-ին ստիպել զենքը վայր դնել: Սիվանի դեպքերից օրեր անց ինձ մոտ եկան իշխանության ներկայացուցիչները, ես նրանց պատասխանեցի, որ անհրաժեշտ են գործնական միջոցներ, եւ կապ չունի՝ ես այստեղ եմ, թե դրսում: Եթե իմ ձեռքում չկան այդ գործնական միջոցները, ապա ինչպե՞ս կարող եմ ես հարցը լուծել: Եթե իշխանությունները ցանկանում են, որ ես դերակատարություն ունենամ այս խնդրի լուծման մեջ, ապա անհրաժեշտ է դրա համար պայմաններ ապահովել: Մենք հավատում ենք, որ այս հարցը չի կարող լուծվել զենքի միջոցով, այն պետք է լուծվի ժողովրդավարական, սահմանադրական մեթոդներով: Ես պետք է ելույթ ունենամ Թուրքիայի խորհրդարանում: Եթե թուրքական կողմն ասում է, որ ցանկանում է այս հարցը լուծել ժողովրդավարական ու սահմանադրական ճանապարհով, ապա մենք կօգնենք նրան դա անելու մեկ շաբաթվա ընթացքում»:

<sup>2</sup> Ամերիկյան Associated Press գործակալությունը սեպտեմբերի 11-ին ընդառաջ 66 երկրներում (որոնց բաժին է ընկնում աշխարհի բնակչության 70 տոկոսը) ահաբեկիչների քանակի վերաբերյալ անցկացրած հետազոտության արդյունքներով հայտարարեց, որ վերջին 10 ամսում դատապարտած ահաբեկիչների թվով Թուրքիան աշխարհի բացարձակ առաջատարն է: Ըստ այդ հետազոտության՝ 2001 թվականի սեպտեմբերի 11-ի ահաբեկչությունից հետո ցայժմ համայն աշխարհում ձերբակալվել է 119.044 ահաբեկիչ, իսկ 35.117 մարդ դատապարտվել է որպես ահաբեկիչ, որոնց 1/3-ը (12.897 մարդ) բաժին է ընկել Թուրքիային: Ամերիկյան գործակալությունը նշել էր, որ Թուրքիայում որպես ահաբեկիչ դատապարտված անձանց հարցում կարծիքները կիսվում են. մի մասը նրանց (քրդերին) դիտարկում է որպես ահաբեկիչներ, իսկ մյուսները՝ ազատության համար պայքարի մարտիկներ:

## **ԻՐԱՆ. ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՋԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ ՍԵՒԱԿ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ**

### **Ներքաղաքական գործընթացներ**

Իրանի ներքաղաքական կյանքում նշանակալի իրադարձություն էր, երբ սեպտեմբերի սկզբին Ա.Խամենեյին Մ.Ահմադինեժադի մոտ 100 ձերբակալված աջակիցների ներում շնորհեց: Սակայն հոգեւոր առաջնորդի այս որոշումը չի կարելի պայմանավորել նախագահի հետ հարաբերությունների բարելավմամբ, քանի որ բոլոր ազատ արձակվածները մեղանշական մամակներով դիմել են երկրի իշխանություններին՝ դրանով իսկ ընդունելով, որ հակաօրինական քայլեր են կատարել: Այդ է վկայում նաեւ այն, որ օգոստոսին եւ սեպտեմբերին Իրանի հոգեւոր առաջնորդը մի քանի անգամ հայտարարեց, թե կառավարությունը չի կատարում ստանձնած պարտավորությունները եւ ժողովրդի կյանքի բարելավման մասին նախկինում տված խոստումները:

Կարելի է ներքաղաքական իրադարձություն կարելի է համարել նաեւ այն, որ կարծես թե վերջնական տեսք ստացան Թեհրանի քաղաքապետ Մ.Ղալիբաֆի՝ 2013թ. նախագահական ընտրություններին մասնակցելու հավակնությունները, ինչի մասին բավական շատ են գրում իրանական մամուլում: Թեհրանի քաղաքապետը, որը վայելում է հոգեւոր իշխանությունների ուղղակի աջակցությունը, բարձր վարկանիշ ունի նաեւ բարեփոխիչների շրջանակում, քանի որ Ղալիբաֆը զարգացած եւ ժամանակակից գործիչ է համարվում, որը վերջին տարիներին կարելի է քայլեր է կատարել ավելի քան 12 մլն բնակչությամբ Թեհրանի կառավարման համակարգի բարեփոխման, տրանսպորտի, սոցիալական եւ մշակութային ոլորտների զարգացման ուղղությամբ:

Չնայած Մ.Ղալիբաֆը վայելում է երկրի հոգեւոր եւ պահպանողական իշխանությունների աջակցությունը, նա Արեւմուտքի հետ հարաբերությունների կարգավորման ակտիվ կողմնակից է: Դեռեւս 2008-ին Տոկիո կատարած պաշտոնական այցի ընթացքում նա այն ժամանակվա սենատոր Բ.Օբամայի հայտարարությունն Իրանի հետ հարաբերությունների կարգավորման պատրաստակամության մասին շատ դրական էր գնահատել եւ նշել, որ իրանական եւ ամերիկյան հասարակություններն այլեւս չեն կարող ապրել լարված միջավայրում: Նշենք, որ Ղալիբաֆը,

որը 2008-ին ճանաչվել էր աշխարհի լավագույն 5 քաղաքապետերից մեկը, ինչպես նշում են տարբեր աղբյուրներ, փայլուն անձնական հարաբերություններ ունի արեւմտյան մեգապոլիսների քաղաքապետերի հետ, ինչն արդեն իսկ Իրան–Արեւմուտք հարաբերությունների կարգավորման գործընթացում կարող է կարեւոր ռեսուրս դառնալ:

Ղալիբաֆի հավակնությունները նախագահական աթոռի նկատմամբ ակնհայտ են նաեւ Մ.Ահմադինեժադի թիմի համար, որը կարծես արդեն գիտակցում է, որ գործող նախագահը դժվար թէ կարողանա ազդել ապագա նախագահական ընտրությունների ընթացքի վրա՝ հաշվի առնելով նրա հակառակորդ թիմի աճող քաղաքական եւ տեղեկատվական ռեսուրսները: Իսկ տեղեկատվական ռեսուրսների պակաս Ղալիբաֆն իրոք չունի: Մասնավորապես, նախագահ Ահմադինեժադի քույրը՝ Թեհրանի քաղաքային խորհրդի անդամ Փ.Ահմադինեժադը, հայտարարել է, որ Թեհրանի քաղաքապետը 82 լրատվական միջոց ունի: Նշենք նաեւ, որ վերջերս բավական ակտիվացել եւ արդիականացվել է քաղաքապետի անձնական կայքը:

Ինչեւէ, Իրանի ներքաղաքական կյանքի վերաբերյալ կանխատեսումներ անելը բավական անշնորհակալ գործ է (նախագահներ Մ.Խաթամիի եւ Մ.Ահմադինեժադի հաղթանակներն ընտրությունների նախօրյակին անհնարին էին թվում), բայց արդեն այսօր կարելի է նշել, որ Մ.Ղալիբաֆի հաղթելու շանսերը 2013-ի նախագահական ընտրություններում չափազանց մեծ են: Իսկ Մ.Ահմադինեժադի հնարավոր վաղաժամ հրաժարականի դեպքում Ղալիբաֆը միակ գործիչը կհանդիսանա, որն արդեն իսկ լավ մշակված ռազմավարություն եւ լուրջ նախընտրական ռեսուրսներ ունի արտահերթ ընտրություններում հաղթանակ տանելու համար:

Ի դեպ, նշենք, որ Մ.Ղալիբաֆը սերտ հարաբերություններ ունի Թեհրանի հայկական համայնքի հետ եւ բազմիցս նշել է հայերի կարեւոր դերն Իրանի պատմության եւ իրանա-իրաքյան պատերազմում:

## **Ջարգացումները Սիրիայում եւ իրանա-թուրքական հարաբերությունները**

Իրանի համար կարեւոր կարելի է համարել հիմնականում 3 տարածաշրջանային գործընթացներ. հակակառավարական շարժումը Սիրիայում, մասնակիորեն դրանից բխող թուրք-իրանական հարաբերությունների վատթարացումը եւ քրդական գործոնի ակտիվացումը:

Այսօր արդեն կարելի է նշել. չնայած «արաբական գարունը» Իրան չհասավ եւ չհանգեցրեց հակակառավարական շարժման ակտիվացման,

դրա անուղղակի հնարավոր ազդեցությունն Իրանի վրա զգալի էր: Եթե հեղափոխական ալիքը Սիրիայում տապալի Բ.Ասադի իշխանությունը, Իրանը Մերձավոր Արևելքում կկորցնի իր հիմնական գործընկերոջն ու դաշնակցին: Բացի այդ, ուղղակիորեն կթուլանան Իրանի լիբանանյան դաշնակից «Չիզբալլահի» դիրքերը, քանի որ այդ կուսակցության ուժն ու հնարավորություններն անմիջականորեն պայմանավորված են նրա՝ Սիրիայի հետ համագործակցությամբ եւ դաշնակցությամբ: Այդ պատճառով սիրիական զարգացումներն Իրանի համար սեփական ազգային անվտանգությանն առնչվող հիմնարար հարց են հանդիսանում, իսկ Բ.Ասադին իշխանության ղեկին պահելը՝ կարելու ազույն խնդիր:

Հատկանշական է, որ սա երկրի հոգեւոր իշխանությունների տեսակետն է, այլ ոչ թե երկրի նախագահինը. Մ.Ահմադինեժադը դեռելս օգոստոսի սկզբին կոչ արեց Բ.Ասադին «լսել սեփական ժողովրդի ձայնը» եւ իրականացնել անհրաժեշտ բարեփոխումներ երկրում, ինչին ի պատասխան՝ հնչեց Ա.Խամենեիի հակառակ կարծիքը. «Նրանք, ովքեր ուզում են հարվածել Սիրիային, իրականում հարվածում են Իրանի Իսլամական Հանրապետությանը: Թուրքիան պետք է գիտակցի, որ Իրանը կօգտագործի իր ողջ ուժը՝ հակազդելու նրանց, ովքեր ցանկանում են հարվածել Սիրիային»:

Ա.Խամենեիի հայտարարությունը կարելի է ուղղակիորեն հակաթուրքական համարել եւ գնահատել որպես անմիջական սպառնալիք Անկարային, ի տարբերություն Մ.Ահմադինեժադի որդեգրած գծի, որն ուղղված է Անկարայի հետ վերջին տարիներին ձեռք բերված լավ հարաբերությունների եւ համագործակցության պահպանմանը: Հենց սիրիական խնդիրը, որը կարելու նշանակություն ունի թե՛ Իրանի եւ թե՛ Թուրքիայի համար, դարձավ իրանա-թուրքական հարաբերությունների վատթարացման հիմնական պատճառը: Նշենք, որ զուտ տնտեսական տեսանկյունից Իրանն ու Թուրքիան ունեն գրեթե հավասար ազդեցություն Սիրիայում. Թուրքիան Սիրիայի հիմնական տնտեսական գործընկերն է՝ ավելի քան \$25 մլրդ մերդրմամբ սիրիական տնտեսության մեջ: Իրանական ֆինանսական օգնության եւ ներդրումների ծավալները Սիրիայում մոտենում են \$20 մլրդ-ի, սակայն, ի տարբերություն թուրքերի, իրանցիներն ունեն այլ կարելու ներկայություն Սիրիայում նույնպես. Դամասկոսի կենտրոնում է տեղակայված Իրանի իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի հատուկ ներկայացուցչությունը՝ ավելի քան 400 հոգուց կազմված սպայական կազմով, իրանական նավատորմն ունի սիրիական նավահանգիստներից ազատ օգտվելու իրավունք եւ 14 մշակութային կենտրոն երկրի տարբեր մասերում, որոնք,

բացի մշակութային ոլորտին առնչվող հարցերից, օժտված են նաև քաղաքական, կրոնական եւ անվտանգության հարցերին առնչվող գործառույթներով:

Իրանի համար ակնհայտ է, որ Ասադի իշխանության տապալումից հետո այդ երկրի դիրքերը Սիրիայում պարզապես կարող են անհետանալ, իսկ Թուրքիան Ասադի տապալումից առնվազն բան չի կորցնի. Անկարան կմնա Դամասկոսի նոր իշխանությունների հիմնական տնտեսական գործընկերը, բացի այդ, քաղաքական եւ ռազմավարական առումով՝ հիմնականում սուննի-իսլամական քաղաքական եւ գաղափարական կողմնորոշում ունեցող սիրիական նոր իշխանությունները կարող են դառնալ Անկարայի նոր եւ կարելի գործընկերը՝ հաշվի առնելով թուրքերի իսլամական հռետորաբանությունը, որը Իսրայելի հետ հարաբերությունների դեպքում տեղափոխվել է իրական քաղաքականության դաշտ:

Նշենք, որ բուն Իսրայելում Թուրքիայի մասին սկսել են խոսել որպես «երկրորդ Իրանի». հայտնի իսրայելցի վերլուծաբան Մ.Ամիրն այս առնչությամբ նշում է, որ Երդողանը «հագել է իրանական շորեր» եւ հեռանում է աշխարհիկությունից՝ ընկղմվելով կրոնական ծայրահեղականության ճահիճը: Սակայն, ինչպես նշում է Ամիրը, «Երդողանը դեռեւս տեղյակ չէ, թե այս ամենն ինչ հետեւանքներ է ունենալու իր համար»:

Թերեւս, Ամիրը ճիշտ է իր գնահատականներում. Անկարայի նոր տարածաշրջանային գաղափարափոսությունն ու քաղաքականությունը մոտ են իրանականին, սակայն, ի տարբերություն շիական Իրանի, որը չունի հիմնականում սուննի մահմեդական տարածաշրջանում առաջնորդի դեր ստանձնելու օբյեկտիվ հնարավորություններ, Անկարան դրանք ունի:

Այդ պատճառով Թեհրանն այսօր կառչել է տարածաշրջանում իր եզակի դաշնակից Բ.Ասադից եւ ամեն կերպ փորձում է պահել նրան իշխանության դեկին, իսկ Անկարան ազատ եւ անկաշկանդ աջակցում է ընդդիմությանը՝ հասկանալով, որ Ասադի տապալումից եւ իսլամիստների իշխանության գալուց ոչինչ չի կորցնի:

Սակայն կա մի էական գործոն, որը Թուրքիային եւ Իրանին դեռեւս պահում է նույն ճամբարում՝ քրդական հարցը:

### **Քրդական հարցը**

Չնայած քրդական հարցի լարվածության համար Իրանում բավական լավ նախադրյալներ են ստեղծվել, Քրդական աշխատավորական կուսակցության (PKK) Հյուսիսային Իրաքում տեղակայված մասնաճյուղի (PJAK) հակաիրանական ակտիվացումն անսպասելի կարելի է համարել:

խոսելով քրդական գործոնի մասին Իրանում՝ պետք է նշել, որ նախագահ Մ.Ահմադինեժադի օրոք երկրի սուլունի մահմեդականների նկատմամբ տարվող ընդգծված խտրական քաղաքականությունը Թեհրանի համար լուրջ խնդիրներ է առաջացրել Բելուջիստանում եւ իրանական Քրդստանում: Տեղի նահանգային իշխանությունների ղեկին նախագահը նշանակել է մարդկանց, որոնք չեն վարանում հակասուննիական հայտարարություններ անել եւ պաշտպանել սուլունիաբնակ տարածքների շիականացման գաղափարը, ինչը բնորոշվում է շիական մզկիթների կառուցմամբ եւ սուլունիականների վերանորոգման եւ ընդարձակման արգելքներով:

Սակայն այն, որ հենց ներկա փուլում է Քրդական աշխատավորական կուսակցության իրաքյան մասնաճյուղը (ըստ որոշ վերլուծությունների, PJAK-ն անմիջականորեն կապված է Միացյալ Նահանգների հետ) անցել հարձակման Իրանի դեմ, կարող է խոսել ամերիկյան նոր հակաիրանական ակտիվացման մասին: Թե ինչ նպատակներ է հետապնդում նման ակտիվացումը ներկա փուլում, դժվար է ստույգ ասել: Սակայն ակնհայտ է, որ ռազմական գործողությունները քրդերի դեմ եւ Հյուսիսային Իրաքի ռմբահարումներն իրանական օդուժի կողմից որոշակիորեն շեղում են իրանական ռեսուրսները Սիրիայից դեպի սեփական տարածք եւ Իրաք: Միեւնույն ժամանակ, իրանական հարվածները Հյուսիսային Իրաքում բացասական ազդեցություն կարող են ունենալ Թեհրանի եւ Իրաքի Քրդստանի միջեւ ձեւավորված բավական ջերմ հարաբերությունների վրա:

Բացառված չի կարելի համարել այն, որ քրդական գործոնի դեմ պայքարի անհրաժեշտությունը Անկարային եւ Թեհրանին կստիպի նորից սկսել համագործակցել, քանի որ խնդիրը հրատապ է երկու պետությունների համար էլ: Սակայն դեռեւս անհայտ է, թե Իրանն ինչպես կարծագանքի թուրքերի ցանկությանը՝ ռազմակայան հիմնել Հյուսիսային Իրաքի Ղանդիլի լեռներում՝ քրդերի հետ պայքարի պատրվակով: Իրանը միշտ դեմ է եղել օտար ռազմական ներկայության մեծացմանն իր սահմաններին, եւ իրաքյան իշխանությունների հնարավոր համաձայնությունը՝ թուրքերին տարածք տրամադրել ռազմակայան տեղադրելու նպատակով, կարող է հանգեցնել իրանա-իրաքյան եւ իրանա-թուրքական հարաբերությունների սրման:

**ԹՈՒՐՔ-ԻՍՐԱՅԵԼԱԿԱՆ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ՎԵՐԱՓՈԽՎՈՒՄ ԵՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ  
*Արտաշես Տեր-Հարությունյան***

Սեպտեմբերի 9-ին իսրայելական լրատվամիջոցները հաղորդեցին, թե փոխվարչապետ, արտաքին գործերի նախարար Ավիգդոր Լիբերմանի գլխավորությամբ Իսրայելի արտգործնախարարությունում ստեղծվել է աշխատանքային խումբ, որը պետք է մշակի առաջարկությունների փաթեթ, թե ինչ կարող են ձեռնարկել հրեական պետությունն ու տարբեր երկրներում գործող հրեական լոբբինգային կազմակերպությունները Թուրքիայի դեմ:

Իսրայելական մամուլը հրապարակեց նաև որոշ առաջարկություններ, որոնք շրջանառվում են արտգործնախարարությունում՝

- ❖ Թել Ավիվի կողմից քաղաքական ու, չի բացառվում՝ նաև ռազմատեխնիկական աջակցության ցուցաբերում Թուրքիայի քրդաբնակ շրջանների անկախության համար պայքարող Քուրդիստանի բանվորական կուսակցությանը (ԶԲԿ)<sup>1</sup>,

- ❖ ԱՄՆ Կոնգրեսում հակաթուրքական կամպանիայի ծավալում, այդ թվում՝ հակաթուրքական ուղղվածության օրինագծերի ներկայացում,

- ❖ աջակցություն Հայկական հարցին (այդ նպատակով նախատեսվում է Լիբերմանի հանդիպումը ԱՄՆ հայկական լոբբինգային կառույցների ներկայացուցիչների հետ),

- ❖ տարբեր երկրներում գտնվող Իսրայելի դեսպանատների կողմից Թուրքիայի դեմ ուղղված կամպանիաների ծավալում եւ այլն:

Չնայած իսրայելա-թուրքական հարաբերությունների ողջ ընթացքում Թել Ավիվը երբեք նման սուր դիրքորոշում չի որդեգրել Անկարայի նկատմամբ, եւ այդ առումով նշված նախաձեռնություններն իրոք աննախադեպ են (անգամ եթե դրանք մնան սոսկ որպես թղթի վրա շարադրված կետեր, որոնց մասին տեղեկության արտահոսքը ՁԼՄ-ներ կազմակերպվել է Իսրայելի արտգործնախարարության կողմից), սակայն, այդքանով հանդերձ՝ հատկապես ուշադրություն է գրավում այն, որ նախաձեռնության հեղինակը ոչ թե որեւէ քաղաքական ուժ է կամ գործիչ, այլ պետական մարմին: Մի կողմից, սա կոչված է ցույց տալու Անկարային Թել Ավիվի մտադրության լրջությունը, բայց մյուս կողմից էլ՝ այն կարող է

վկայել իսրայելա-թուրքական հարաբերություններում ի հայտ եկած աննախադեպ հակասությունների մասին, որոնք, թերեւս, արդեն մուտք են գործում հակամարտության փուլ:

### **Թուրքիայի ճնշումն իսրայելի նկատմամբ աճում է**

Իսրայելում որոշեցին հանդես գալ նման նախաձեռնություններով, երբ սեպտեմբերի 8-ին Al Jazeera հեռուստաընկերությանը տված հարցազրույցի ժամանակ Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը հայտարարեց, թե հաջորդ անգամ թուրքական ռազմածովային ուժերն ուղեկցելու են Գազայի հատված հումանիտար բեռ տանող նավերին:

Հայտնի է, որ Էրդողանի գլխավորած Արդարություն եւ զարգացում կուսակցության հետ սերտ կապեր ունեցող թուրքական իսլամիստական «Մարդու իրավունքների, ազատության եւ հումանիտար օգնության հիմնադրամի» (թուրք.՝ İnsan Hak ve Huurriyetleri ve İnsani Yardim Vakfi) նախաձեռնությամբ անցած տարի մայիսին բեռնատար նավերի մի խումբ («Ազատության նավատորմ») շարժվեց դեպի Գազայի հատված՝ նպատակ ունենալով ճեղքել իսրայելական շրջափակումը եւ մարդասիրական բեռ հասցնել Գազա, որը 2007-ից գտնվում է «Համաս» շարժման իշխանության ներքո: Հայտնի է նաեւ, որ 2010թ. մայիսի 31-ին իսրայելական հատուկ նշանակության ուժերը կանգնեցրին նավերի ընթացքը, իսկ թուրքական Mavi Marmara նավի վրա տեղի ունեցած ընդհարման հետեւանքով զոհվեցին հիմնադրամի ինը թուրք ակտիվիստներ: Անցած ավելի քան մեկ տարվա ընթացքում Անկարան պահանջում էր Թել Ավիվից ներողություն խնդրել եւ փոխհատուցել զոհվածների ընտանիքներին, ինչին հետեւում էր իսրայելական կողմի մերժումը:

Կողմերի վեճը լուծելու համար ՄԱԿ-ի հովանու ներքո եւ Նոր Զեւլանդիայի նախկին վարչապետ Ջեֆրի Փալմերի գլխավորությամբ ստեղծվեց հատուկ հանձնաժողով, որը պետք է քններ միջադեպը եւ նշեր, թե միջազգային իրավունքի տեսանկյունից ինչքանով էր իսրայելական կողմի քայլն իրավաչափ: Ըստ որոշ տեղեկությունների, հանձնաժողովի եզրակացությունները պատրաստ էին դեռ անցած տարի աշնանը, սակայն գլխավորապես թուրքական կողմի պահանջով դրանց հրապարակումն անընդհատ ձգձգվում էր: Շուտով պարզ դարձավ, թե ինչու:

Սեպտեմբերի 1-ին, ըստ ամենայնի իսրայելական կողմի նախաձեռնությամբ, The New York Times պարբերականը հրապարակեց Փալմերի հանձնաժողովի եզրակացությունը. թեւեւ իսրայելական կողմը ոչ համաչափ ուժ է կիրառել Mavi Marmara-ի վրա տեղի ունեցած ընդհարման ժամանակ, ինչի հետեւանքով էլ զոհվել են ինը հոգի,

սակայն Գազայի հատվածի շրջափակումը համապատասխանում է միջազգային իրավունքին:

Նման եզրակացությունը հարված է «Ազատության նավատորմի» հետ կապված թուրքական ողջ նախաձեռնությանը: Մինչև նավատորմի ճանապարհ ընկնելը Անկարայում գիտեին թե՛ Ավիվի դիրքորոշումը, եւ այդուհանդերձ՝ թուրքական կողմը որոշեց հանդես գալ նման քայլով: Նպատակը՝ Իսրայելի հետ լարվածության աճն օգտագործելն է մահմեդական աշխարհում եւ հատկապես Մերձավոր Արեւելքում սեփական հեղինակությունը ու քաղաքական ազդեցությունը բարձրացնելու համար: Յետեւաբար, Փալմերի հանձնաժողովի նման եզրակացությունը չի համապատասխանում Թուրքիայի հաշվարկներին. Իսրայելը կարողացավ չթուլյատրել «Ազատության նավատորմի» մուտքը Գազայի հատված, պահեց իր հեղինակությունն Անկարայի հետ ավելի քան մեկ տարի տեւած պայքարում եւ ամենակարեւորը՝ իրավունք ստացավ հետագայում եւս գործել նման կերպ: Արդյունքում՝ այդ ամենը ոչ թե նպաստեց տարածաշրջանում Թուրքիայի հեղինակության աճին, այլ՝ ճիշտ հակառակը:

The New York Times-ի հրապարակմանը հետեւեց թուրքական կողմի աննախադեպ սուր արձագանքը: Անկարայի պահանջով Թուրքիան լքեցին Իսրայելի դեսպանը եւ իսրայելցի բոլոր բարձրաստիճան դիվանագետները, դիվանագիտական հարաբերությունների մակարդակն իջեցվեց մինչև երկրորդ քարտուղարի աստիճանի, առկախվեցին թուրք-իսրայելական ռազմատեխնիկական բոլոր պայմանագրերը, հայտարարվեց, թե Գազայի շրջափակման օրինականության հարցն Անկարան բարձրացնելու է Արդարադատության միջազգային դատարանում եւ վերջապես՝ Իսրայելի վարչապետ Բենիամին Նեթանյահուի, պաշտպանության նախարար Էհուդ Բարակի, Գլխավոր սպայակույտի պետ Գաբի Աշքենազիի, ռազմածովային ուժերի հրամանատար Ջվի Մերոնի ու մի շարք սպաների դեմ միջազգային դատական ատյաններում հայց է ներկայացվելու՝ վերոհիշյալ ինը թուրք ակտիվիստների սպանության մեղադրանքով:

Սակայն նշվածը թե՛ Ավիվում չընկալվեց սոսկ որպես թուրքական կողմի արձագանք: Վերոհիշյալը եւ ամենակարեւորը՝ Երդողանի հայտարարությունը, թե հաջորդ անգամ թուրքական ռազմածովային ուժերն ուղեկցելու են Գազայի հատված հումանիտար բեռ տանող նավերին, թե՛ Ավիվում ընկալեցին որպես Թուրքիայի կողմից Իսրայելի նկատմամբ ճնշում գործադրելու նոր ծրագիր, որը ոչ այնքան «Ազատության նավատորմի» հետ կապված նախաձեռնության շարունակությունն է, որքան գալիս է փոխարինելու նրան: Մյուս կողմից, ակնհայտ դարձավ մի բան՝ Անկարայում որոշում է կայացվել մեծացնել ճնշումը թե՛ Ավիվի

նկատմամբ, եւ թուրք-իսրայելական ճգնաժամը հակասություններից աստիճանաբար վերափոխվում է հակամարտության:

Վերջին հետեւության օգտին են խոսում նաեւ հետեւյալ հանգամանքները:

Սեպտեմբերի 6-ին Թուրքիայի Եվրամիության հարցերով նախարար Էգեմեն Բագիսը հայտարարեց, թե Անկարային մտահոգում են Կիպրոսի Զանրապետության ծրագրերը՝ Միջերկրական ծովի արեւելյան մասում՝ Կիպրոս կղզու հարավային ափերին հարող հատվածում հետազոտական ու հորատման աշխատանքներ անցկացնել, ուր հայտնաբերվել են գազի լուրջ պաշարներ:

Կիպրոսը Իսրայելի, Եգիպտոսի ու Լիբանանի հետ կնքել է հատուկ տնտեսական գոտու վերաբերյալ համաձայնագրեր, որով այդ երկրները, փաստորեն, իրար մեջ են բաժանել Միջերկրական ծովի՝ իրենց հարող հատվածը եւ այնտեղ սկսել են նավթի ու գազի որոնման աշխատանքներ: Ինչպես նշվեց, Կիպրոսի գոտում հայտնաբերվել են գազի լուրջ պաշարներ, եւ կղզու կառավարությունը պայմանագիր է կնքել ամերիկյան Noble Energy ընկերության հետ՝ գազի արդյունահանում սկսելու համար: Նախատեսվում է, որ հորատման աշխատանքները պետք է սկսվեն հոկտեմբերի սկզբներին:

Այս ամենի ֆոնին պաշտոնական Անկարան հայտարարեց, թե նշված հատուկ տնտեսական գոտիների սահմանների հարցը վիճելի է, ուստի կողմերն իրավունք չունեն ենթակիրների արդյունահանման աշխատանքներ սկսել այնտեղ: Ինչ վերաբերում է Կիպրոսին, ապա Թուրքիայի էներգետիկայի նախարար Թաներ Յիլդիզը հայտարարեց, թե պետք չէ չարաչափել Անկարայի համբերությունը, իսկ Էգեմեն Բագիսն էլ բացահայտ ասաց, որ եթե կիպրական կողմը սկսի աշխատանքները, ապա Անկարան այդ հատված կուղարկի իր ռազմածովային ուժերը, ինչպես որ դա արեց 2008թ.:

Սակայն խոսքը միայն Կիպրոսին չի վերաբերում: Սեպտեմբերի 8-ին Al Jazeera-ին տված վերոհիշյալ հարցազրույցի ժամանակ Թուրքիայի վարչապետը նաեւ հայտարարեց, թե պետք է քայլեր ձեռնարկել՝ դադարեցնելու Միջերկրական ծովի արեւելյան մասում Իսրայելի կողմից էներգակիրների միակողմանի արդյունահանումը: Էրդողանը թեւ չնամրամասնեց, թե ինչ քայլեր պետք է ձեռնարկվեն, սակայն թուրքական ռազմածովային ուժերը Գազայի հատված ուղարկելու հայտարարության հետ միաժամանակ հնչած այդ խոսքերը կոչված են ցույց տալու Անկարայի նպատակը՝ ոչ այնքան մաս ունենալ Միջերկրական ծովի արեւելյան հատվածում իրականացվելիք նավթի ու գազի արդյունահանումից,

որքան հաստատել իր ռազմաքաղաքական ազդեցությունը Միջերկրականի այդ հատվածում: Եթե Թուրքիան կարողանա դա իրականացնել, ապա դա լրացուցիչ ճնշում է լինելու Թել Ավիվի նկատմամբ, քանի որ իսրայելական ռազմածովային ուժերն իրենց գործունեության շրջանում կունենան լուրջ մրցակից, որի ներկայությունը կարող է սահմանափակել իսրայելցիների հնարավորությունները:

Այն, որ Անկարայի այդ ծրագրերը կարող են իրականանալ, այն էլ՝ մոտ ապագայում, վկայում է Մուբարաքի տապալումից հետո բավական արագ զարգացող թուրք-եգիպտական ռազմաքաղաքական համագործակցությունը: Սեպտեմբերի 7-ին հայտարարվեց, որ եգիպտական ռազմածովային ուժերը միանալու են թուրքականին, որոնք նախատեսում են առաջիկայում Միջերկրականի արեւելյան հատվածում զորավարություններ անցկացնել: Սեպտեմբերի 12-ին մեկնարկեց Էրդողանի տարածաշրջանային այցը Եգիպտոս, Թունիս եւ Լիբիա, ու Կահիրեում, ըստ հաղորդագրությունների, կողմերը ձեռք բերեցին ռազմավարական կարգի պայմանավորվածություններ քաղաքական, ռազմական եւ տնտեսական ոլորտներում:

Ինչն է ուշագրավ՝ Իսրայելում թուրք-եգիպտական ռազմաքաղաքական ու տնտեսական կապերի ակտիվացումն անմիջապես բացատրեցին իրենց նկատմամբ ճնշման նոր լծակներ ունենալու Անկարայի նպատակով: Հայտնի է, որ հատկապես վերջին երկու ամիսներին իրավիճակը սկսեց կտրուկ սրվել իսրայելա-եգիպտական սահմանին, երկու կողմից եղան զոհեր, Իսրայելը ստիպված եղավ լրացուցիչ զորամիավորումներ ու հետախուզական անօդաչու ինքնաթիռներ կենտրոնացնել եգիպտական ուղղությամբ: 1978թ. քեմփդեյիդյան համաձայնագիրը թույլ է տալիս Կահիրեին միայն սահմանափակ թվով զորամիավորումներ ու անվտանգության ուժեր ունենալ Իսրայելին սահմանակից Սինայի թերակղզում, իսկ Մուբարաքի տապալումից հետո իրավիճակը թերակղզում սկսեց բարդանալ, քանի որ տեղի իսլամիստները սկսեցին գործել շատ ավելի ազատ:

Անվտանգության գծով իսրայելցի շատ փորձագետներ կարծիք հայտնեցին, թե եգիպտական ուղղությամբ նկատվող սպառնալիքի աճը պետք է պայմանավորել նաեւ Անկարայի գաղտնի գործունեությամբ՝ ուղղված Իսրայելի դեմ, որը նպատակ է հետապնդում հրեական պետության համար ստեղծել նոր խնդիրներ: Թել Ավիվում հատկապես ուշադրություն գրավեց այն, որ Կահիրե Էրդողանի այցելությունից ընդամենը երկու օր առաջ՝ սեպտեմբերի 10-ին, եգիպտացի հազարավոր իսլամիստներ՝ տեղի «Մուսուլման եղբայրների» առաջնորդությամբ, գրավեցին ու հրկիզեցին Եգիպտոսում Իսրայելի դեսպանատունը: Էլ

ավելի ուշագրավ էր այն, որ իսրայելական աղբյուրների փոխանցմամբ՝ եգիպտական անվտանգության ուժերը տեղյակ էին նախատեսվող հարձակման մասին, սակայն, փաստորեն, չկանխեցին այն:

### **Հետևություններ**

Թուրք-իսրայելական խորացող հակասություններում ռազմուժի թեմայի շոշափումը ցույց է տալիս, որ Անկարայում հետևողականորեն գնում են թեև Ավիվի հետ լարվածության մակարդակի բարձրացմանը:

Մյուս կողմից, քանի որ իսլամական աշխարհում ու հատկապես Մերձավոր Արեւելքում սեփական հեղինակությունն ու ազդեցությունը բարձրացնելու նպատակն այսօր Թուրքիայի արտաքին քաղաքականության մեջ դարձել է, թերևս, ամենակարեւոր ուղղությունը, եւ այդ նպատակին հասնելու համար Անկարայի կողմից իսրայելական թեմայի շահարկումը շարունակվելու է, ավելի հավանական է, որ տեսանելի հեռանկարում Անկարայում շարունակեն Իսրայելի նկատմամբ այսօր կիրառվող քաղաքականությունը:

Հետևաբար՝ գլխավոր հարցն է դառնում, թե ռազմաքաղաքական ու տնտեսական կարողություններով հարուստ երկու պետությունների միջև լարվածության աճն ինչ դրսևորումներ է ունենալու, այդ թվում՝ տարածաշրջանի այլ երկրների համար:

---

<sup>1</sup> Թուրք-իսրայելական հակասությունների եւ լարվածության պատմության մեջ առաջին անգամ է, որ թեև Ավիվը սկսեց բարձրաձայնել ՔԲԿ-ին աջակցելու, ընդ որում՝ նաեւ ռազմատեխնիկական աջակցություն ցուցաբերելու հնարավորության մասին: Ըստ իսրայելական լրատվամիջոցների, պաշտոնական թեև Ավիվը նման քայլն այլեւս հասկանում է որպես պատասխան՝ Գազայի հատվածում իշխող ու Իսրայելի նկատմամբ թշնամաբար տրամադրված իսլամիստական «Համաս» շարժման ու Անկարայի միջև զարգացող կապերի: Հրապարակումների համաձայն, նախատեսվում է անցկացնել Լիբերմանի եւ ՔԲԿ առաջնորդների հանդիպումներ: Եթե ներկայացվածն իրականություն դառնա, ապա ԽՍՀՄ-ից հետո, Իսրայելը կդառնա երկրորդ պետությունը, որը նման, ըստ էության՝ բացահայտ կերպով կաջակցի Թուրքիայի քրդերին, ինչն էլ իր հերթին կնշանակի Իսրայելի կողմից ՔԲԿ ու ամենակարեւորը՝ կազմակերպության գաղափարի (Թուրքիայի քրդաբնակ շրջանների անկախություն) de facto ճանաչում:

**ԱՄՆ – ՉԻՆԱՍՏԱՆ. ՊԱՅՔԱՐ ԳԼՈՐԱԼ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ  
ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՀԱՄԱՐ  
Սուրեն Սարյան**

Ներկայումս, ինչպես եւ սառը պատերազմի տարիներին, շարունակվում է համաշխարհային տերությունների միջեւ պայքարը գլոբալ կառավարման եւ ռեսուրսների համար: Սակայն եթե առաջ այդ պայքարն ուներ պարզ կառուցվածք՝ Արեւելք – Արեւմուտք, կոմունիզմ – ժողովրդավարություն գծով, ապա այսօր այն դառնում է բազմապլանային՝ ներառելով մի շարք ուժային կենտրոններ:

Այս առումով, ուշադրության է արժանի վերջին շրջանում Չինաստանի գլոբալ ակտիվությունը, ինչպես նաեւ էներգետիկ ռեսուրսների եւ հումքային պաշարների ձեռքբերման հարցում սեփական շահերի պաշտպանության նրա քաղաքականությունը:

Փորձագետները նշում են, որ Չինաստանի գործողություններն Աֆրիկայում, Միջին Արեւելքում, Լատինական Ամերիկայում եւ Կենտրոնական Ասիայում ու նույնիսկ Հարավային Կովկասում պայմանավորված են էներգետիկ անվտանգության նկատառումներով: Ընդ որում, չինական ներդրումային առաջարկները չեն ուղեկցվում քաղաքական պայմաններով՝ ի տարբերություն ԱՄՆ, ԵՄ եւ Ռուսաստանի նմանատիպ քայլերի: Այսօր արդեն ՉԺՀ-ն դարձել է Կենտրոնական Ասիայի պետությունների կենսականորեն անհրաժեշտ ռազմավարական գործընկերը: Դրա վկայությունն են արդեն գործող չին-ղազախական նավթամուղն ու չին-թուրքմենական գազամուղը:

Բացի այդ, Չինաստանը դարձել է գլխավոր ներդրողը Կենտրոնական Ասիայի երկրների ենթակառուցվածքների զարգացման գործում՝ գումարների փոխարեն ձեռք բերելով էներգակիրներ եւ նույնիսկ տարածքներ, ինչպես դա տեղի է ունենում Ղազախստանի, Ղրղզստանի կամ Տաջիկստանի պարագայում: Չինաստանի հնարավորությունները նաեւ լուրջ սպառնալիք են Ռուսաստանի ապագայի համար: Այսպիսով, տարածքային գրոհը դեպի Կենտրոնական Ասիա, ինչպես նաեւ դեպի Հարավարեւելյան Ասիա ակտիվ արտագաղթի խթանումը, Լատինական Ամերիկայում, Աֆրիկայում ու Արեւմտյան Ասիայում «մեղմ ուժի» քաղաքականության կիրառումը չինական ներկա ռազմավարության ուղեմիջներն են:

ԱՄՆ պահպանողական ուղղվածության փորձագետները կարծում են, որ Չինաստանի ռազմական հավակնությունները շուտով սպառնալու են ԱՄՆ ասիական դաշնակիցներին եւ հարվածի տակ են դնելու ԱՄՆ գլոբալ առաջնորդության ռազմավարությունը: Նրանք պնդում են, որ ՉԺՀ-ն դադարում է լինել ստատուս քվոյի տերություն՝ շահագործման հանձնելով նոր ռազմական տեխնոլոգիաներ եւ սպառազինությունների տեսակներ: Չինաստանը սկսել է ակտիվորեն հավակնել Չարավչինական ծովում կղզիների եւ նավթային հանքերի ձեռքբերմանը: Այդ պատճառով, նշված փորձագետների կարծիքով, ապագա հակամարտությունների դաշտն է լինելու ոչ թե Մերձավոր Արեւելքը, այլ Արեւելյան Ասիան:

Սակայն անգամ եթե վերոնշյալ վերլուծաբաններն իրավացի են՝ Չինաստանի կողմից Ամերիկայի գլոբալ առաջնորդությունը վիճարկելու հարցում, ապա պետք է հաշվի առնել, որ ՉԺՀ-ն չունի այդ ներուժը՝ նման ծրագիր իրականացնելու համար: Առկա են լուրջ սահմանափակումներ ռեսուրսների եւ արտաքին շուկաների հարցերում, որոնք զսպում են չինական հավակնությունները: Ինչքան Չինաստանը կոշտ դիրք է փորձում գրավել, այնքան վատթարանում են նրա հարաբերություններն իր հիմնական հարեւանների՝ Ռուսաստանի, Ճապոնիայի եւ Հվ.Կորեայի հետ: Իսկ դա ուժեղացնում է հենց ԱՄՆ դերը՝ Ասիայում անվտանգության համակարգի ապահովման գործում:

Բացի այդ, իրականում ԱՄՆ-ը եւ ՉԺՀ-ն չունեն շահերի խոր բախում, որը կբերեր այդ երկու գերտերությունների լուրջ առճակատմանը: Թերեւս, միակ սուր հակադրությունը ԱՄՆ-ի եւ ՉԺՀ-ի միջեւ հնարավոր է Թայվանի հարցում, սակայն դժվար է ասել, թե որքանով է այն այսօր ակտուալ:

Այս տարվա հունվարին ՉԺՀ նախագահ Չու Չինթաոն եւ ԱՄՆ նախագահ Բ.Օբաման Վաշինգտոնում ստորագրեցին կողմերի փոխադարձ շահերի ճանաչման մասին փաստաթուղթ: Վերլուծաբանները նշում են, որ այդ փաստաթուղթը որոշում է նոր աշխարհակարգը XXI դարում:

Չետաքրքրական է նշել, որ 2011թ. զարգացումներում Չինաստանը, որի վերելքի մասին այդքան խոսվում էր 2010-ին, գրավեց սպասողական դիրք: Մինչ այդ Չինաստանը բավական ակտիվ էր՝ հայտարարելով Չարավչինական ծովի ավազանն իր ազգային շահերի կենսական գոտի, ինչպես նաեւ սկսելով հավակնել գլոբալ ֆինանսական եւ տնտեսական ճգնաժամում ելք գտած առաջնորդի դերին: Սակայն գլոբալ ստատուս քվոյի խախտումը ստիպեց չինական ռազմավարության ճարտարապետ-

ներին հետ քաշվել՝ սպասելով եւ հետեւելով դեպքերի զարգացմանը:

Չինաստանը նաեւ զսպվածություն է ցուցաբերում ամերիկյան տնտեսության հետ կապված վիճակի առնչությամբ: Հասկանալով, որ ամերիկյան շուկայի փլուզումը պարզապես կկազմալուծի չինական տնտեսությունը, Պեկինը զերծ մնաց կոնկրետ քայլերից՝ ամերիկյան դոլարն այլ պահուստային արժույթով փոխարինելու հարցում: Այդ փոխադարձ կախվածության նշանը դարձավ օգոստոսին ԱՄՆ փոխնախագահ Ջո Բայդենի այցը Պեկին, որի ընթացքում պարտապանը վստահեցրեց պարտատիրոջը, որ ամեն ինչ մնում է նույն կերպով եւ չինական պարտքերին սպառնալիք չի ստեղծվել: Ինչպես նշում է ԱՄՆ նախկին պետքարտուղար Հենրի Զիսինջերը, Չինաստանն առանցքային դերակատարում ունի ամերիկյան տնտեսության վերականգնման գործում:

Նա նաեւ գտնում է, որ Չինաստանն առանցքային դեր ունի նոր աշխարհակարգի կառուցման խնդրում: Եվ չին-ամերիկյան հարաբերությունները, որոնք սկսվել են որպես ռազմավարական նախագիծ՝ խորհրդային վտանգը զսպելու նպատակով, այսօր վերածվել են գլոբալ կառավարման եւ անվտանգության համակարգերի կենտրոնական կառույցի: Ի պատասխան այս ձեւակերպումներին, չինացի պետական պաշտոնյաները եւս նշում են, որ Չինաստանի եւ Միացյալ Նահանգների միջեւ կառուցողական համագործակցության կայացումն ու զարգացումը դարձել են պատմական անհրաժեշտություն:

Չինացի փորձագետները համարում են, որ աշխարհը դարձել է ավելի անկանխատեսելի եւ անկայուն. տերությունների միջեւ հակասությունները, մահնեղական ծայրահեղականության աճը, հնացած միջազգային կազմակերպությունները, միջուկային զենքի տարածման խորացող վտանգը, հաճախակի տարածաշրջանային հակամարտությունները ստեղծում են անիշխանություն եւ անորոշություն: Այս իրավիճակը ստեղծում է բոլորի համար ինչպես լավ հնարավորություններ, այնպես էլ լուրջ ռիսկեր:

Պեկինն, ի տարբերություն Վաշինգտոնի, դեռ չի մշակել կամ առաջ չի քաշում իր տեսլականը՝ գլոբալ համակարգում Չինաստանի դերի համար: Ամեն դեպքում, դեռ շատ հարցերում Չինաստանը մնում է հետնապահ երկիր, եւ արագընթաց վերելքի դեպքում Պեկինը բախվելու է նոր լուրջ մարտահրավերների: Ի տարբերություն ԱՄՆ-ի, որն իր կայսերական առաքելությունը տեսնում է ամբողջ մարդկության համար «բլրի գագաթին փայլատակող քաղաք» լինելու մեջ, Չինաստանը, եւս լինելով կայսրություն, հետաքրքրվում է արտաքին աշխարհով այնքա-

նով, որքանով այն կարող է օգնել իրեն՝ սեփական ներքին խնդիրների լուծման հարցում:

Կարելի է եզրակացնել, որ ԱՄՆ – ՉԺՀ հարաբերություններում առկա է փոխադարձ շահի գործոնը, երբ ԱՄՆ-ը ապահովում է իր համար էժան արտադրանքի ներկրման հնարավորություն, իսկ Չինաստանը դրա դիմաց ստանում է համաշխարհային արժույթ հանդիսացող դոլարներ, որոնցով զնուն է նավթահունքային պետություններից իր զարգացման համար կենսականորեն անհրաժեշտ էներգակիրներն ու հումքը: Այսինքն՝ ԱՄՆ-ն էլ իր տնտեսական կայունությունն ապահովելու համար պետք է թույլ տա Չինաստանին ձեռք բերել այդ ռեսուրսները: Եթե Չինաստանի ռեսուրսային քաղաքականությունը վտանգ ներկայացներ ԱՄՆ-ի համար, ապա դժվար թե բոլոր այն երկրները, որտեղ քաղաքական էլիտան սերտորեն կապված է Վաշինգտոնի հետ, չինական կորպորացիաներին թույլ տային շահել բազմաթիվ տեներներ եւ շահագործել իրենց հումքը: ՉԺՀ-ն կկարողանա վարել ԱՄՆ-ից ինքնուրույն քաղաքականություն այն դեպքում միայն, եթե առաջ անցնի ռազմական սպառազինությունների եւ բարձր տեխնոլոգիաների ոլորտներում: Սակայն հենց այստեղ ամերիկյան առաջնորդությունն անվիճարկելի է մնալու դեռ երկար ժամանակ:

Բացի այդ, այն պայմաններում, երբ սկսել է արագ զարգանալ մյուս ասիական հսկան՝ Չնդկաստանը, որի հետ ԱՄՆ-ը կառուցում է ռազմավարական դաշնակցային հարաբերություններ, այդ թվում՝ ռազմաքաղաքական ասպարեզում, Չինաստանի համար ազատության դաշտը բավական նեղանում է: Եվ նա ստիպված է ամեն կերպ աջակցել Պակիստանին՝ հնդկա-ամերիկյան դաշինքին հակակշիռ ստեղծելու համար: Չինաստանը ներդրել է 1,7 մլրդ դոլար՝ Պակիստանում Գվադար նավահանգստի կառուցման նպատակով, որն առանցքային նշանակություն ունի դեպի Պարսից ծոցի նավթագազային հարստությունները Չինաստանի ելքն ապահովելու գործում: Բացի այդ, ՉԺՀ-ն ծրագրում է Գվադարը դարձնել իր եւ Պակիստանի համատեղ ռազմածովային բազա:

Որոշ վերլուծաբաններ Չինաստանի համար կանխատեսում են համաշխարհային առաջնորդության ստանձնում մոտակա տասնամյակում կամ տասնամյակներում, քանի որ այն կարող է շուտով անցնել ԱՄՆ-ին իր տնտեսական ցուցանիշներով: Սակայն լինել ամենամեծը՝ դեռ չի նշանակում լինել առաջինը: Բացի աշխարհում թիվ 2 տնտեսությունը լինելուց, Չինաստանը դեռ հեռու է այլ ոլորտներում առաջատար դիրքեր գրավելուց կամ մրցակից դառնալուց (ռազմաստրատեգիական, նոր տեխնոլոգիաների, սոցիալական եւ այլն):

Չինաստանի խոցելի տեղերն են մնում էներգակիրների եւ սննդի մատակարարումները: Ընդ որում, բացի Ռուսաստանից, Չինաստանի էներգետիկ մայրուղիներն անցնում են անկայուն տարածաշրջաններով: Անկայունության ներուժ ունի անգամ նրա սեփական տարածքը՝ Սինձյան-Ուլոուրական շրջանը, որը սահմանակից է Կենտրոնական Ասիային եւ Աֆղանստանին:

Այժմ հարցն այն է, թե արդյոք Չինաստանը 2012-2013թթ. նոր ղեկավարության հետ արդեն կփորձի նվազեցնել իր արտաքին կախվածության աստիճանը:

Այսպես, Չինաստանը զերծ մնաց G-2 տանդեմի ստեղծման միջոցով աշխարհը կիսելու ԱՄՆ առաջարկներն ընդունելուց՝ իրեն համարելով «զարգացող երկիր»: Պեկինը ձգտում է ակտիվորեն օգտվել գլոբալ կառավարման տնտեսական լծակներից եւ համաշխարհային ռեսուրսներից, սակայն ամեն կերպ խուսափում է դրա քաղաքական եւ քաղաքակրթական օրակարգի հարցերի քննարկումներից:

Ըստ էության, ՉԺՀ ղեկավարությունը շարունակելու է Ղեն Սյաոպինի պատգամների իրագործումը՝ չմիանալ որեւէ ռազմաքաղաքական դաշինքի եւ ցուցաբերել զսպվածություն արտաքին գործերում: Սակայն, մյուս կողմից, Չինաստանի տնտեսական հաջողությունները սնուցում են նաեւ այդ տերության աշխարհաքաղաքական հավակնությունները եւ ազգայնականության աճը, իսկ բուն տնտեսական կարիքները հարկադրում են ակտիվացնել չինական ջանքերը՝ էներգետիկ եւ այլ հումքային ռեսուրսների ձեռքբերման հարցում: Ամեն դեպքում, ապագայում Չինաստանի կարեւորագույն որոշումները պայմանավորված են լինելու ոչ թե ներքին կամքով եւ սեփական ռազմավարությամբ, այլ արտաքին հանգամանքներով: Այդ պատճառով ՉԺՀ-ն կառուցում է իր ռազմավարական գործընկերությունը հենց ԱՄՆ-ի հետ, ապա նաեւ ակտիվորեն կայացնում Շանհայի համագործակցության կազմակերպությունը, զարգացնում ազատ առեւտրի գոտիները՝ Հարավարեւելյան Ասիայի երկրների հետ միասին:

Իսկ առայժմ այնպիսի իրադարձություններ, ինչպիսիք են Սուդանի բաժանումը (Սուդանից արտահանվող նավթը մեծ մասամբ արտահանվում էր դեպի ՉԺՀ) եւ Լիբիայի դեմ ՄԱԿ-ի կողմից արտոնված պատերազմը, վկայում են, որ ՉԺՀ-ն չի ձգտում դիմադրել ԱՄՆ-ի կողմից նոր աշխարհակարգի կառուցման ընթացքին, այլ ընդհակառակը՝ փորձելու է ներգրավվել դրա մեջ՝ պաշտպանելով սեփական շահը: Պետք է հաշվի առնել, որ ինչպես ԱՄՆ-ը, այնպես էլ ՉԺՀ-ն առեւտրային կայսրություններ են. այսինքն՝ երկուսն էլ գերադասում են առեւտրի մեջ մտնել եւ

պայմանավորվել որեւէ հարցի շուրջ կամ պարզապես «զնել» դիմացինին, ու միայն ծայրահեղ դեպքում դիմել ուժային սցենարին: Ուստի, Չինաստանը պարզապես դեմ է լինելու ամերիկյան դոլարի՝ որպես համաշխարհային արժույթի փոխարինմանը, քանի որ, ինչքան էլ ցանկանա, դրա առաջին հարվածն ինքն է ստանալու: Պեկինը, ինչպես եւ մնացած տերությունները, նաեւ պատրաստ չէ փոխարինել ԱՄՆ-ին գլոբալ կառավարման համակարգում, քանի որ հակառակ դեպքում կառաջանա վակուում, որտեղ ծայրահեղական ուժերը ձեռքերի ազատություն կստանան:

Ամերիկյան փորձագետները կոչ են անում վերանայել ԱՄՆ գլոբալ առաջնորդության հայեցակարգը, քանի որ Միացյալ Նահանգները վերցրել է իր ուժերից ու ռեսուրսներից վեր բեռ եւ հարկ է այն կիսել համաշխարհային այլ դերակատարների, այդ թվում՝ Չինաստանի հետ: Լիբիական պատերազմը ցույց տվեց, որ ԱՄՆ-ն այսուհետ գործելու է ոչ միայնակ: Ինչպես խոստովանեց սենատոր Ջոն Մակքեյնը, Լիբիայում Միացյալ Նահանգները ղեկավարումն իրականացնում էր կողքից: Այսինքն՝ Օբամայի վարչակազմի ուղեգիծն այն է, որ ԱՄՆ-ը գործի բոլոր մնացած խաղացողների անունից: Կամ՝ նրանց ձեռքով:

Չինաստանի ուղղությամբ Միացյալ Նահանգները որդեգրել է ռազմավարական հանդարտեցման ուղեգիծը, երբ հաստատում դիվանագիտությունը զուգորդվում է Համաշխարհային օվկիանոսում հզորագույն ամերիկյան նավատորմի առկայության հետ: Քանի ամերիկյան նավատորմը վերահսկում է ամբողջ Համաշխարհային օվկիանոսը, Չինաստանը, որի էներգակիրների մեծ մասը հասցվում է ծովային ուղիներով, գտնվում է ԱՄՆ-ից կախվածության վիճակում: Այդ պատճառով էլ Պեկինը սկսել է մտահոգվել սեփական նոր նավատորմի կառուցման հարցով:

Ըստ էության, Վաշինգտոնն ու Պեկինն այսօր ուղիներ են փնտրում Հարավարեւմտյան եւ Կենտրոնական Ասիաներում հաշտեցման համար: Դա լինելու է ոչ թե ազդեցության գոտիների բաժանում, այլ համատիրություն: Ամեն դեպքում, ԱՄՆ-ՉԺՀ հարաբերություններն, իրոք, ձեւավորելու են նոր աշխարհակարգի օրակարգը:

Ունենալով պահպանողական աշխարհաքաղաքական մտածելակերպ՝ ՉԺՀ-ն հակադրվում է ԱՄՆ «հեղափոխական» մտածելակերպին, քանի որ Միացյալ Նահանգներն ակնհայտորեն հասկանում է, որ աշխարհի տարածաշրջաններում ձեւավորված ստատուս քվոն իրեն սպառում է: Ակնհայտ է ԱՄՆ ձգտումը՝ հօգուտ իրեն շրջել գլոբալ զարգացման ընթացքը: Հարկ է նշել նաեւ, որ Արեւմուտքը երբեւէ չի

վախեցել ստատուս քվոն խախտելուց, ինչի ապացույցն են Մեծ Մերձավոր Արեւելքում ծավալվող իրադարձությունները:

ԱՄՆ-ը փոխում է մարտավարությունը, սակայն ոչ ռազմավարությունը: Անիրական է թվում աշխարհի միակ գերտերության կապիտուլյացիան ինչպես Չինաստանի, այնպես էլ այլ տարածաշրջանային ուժերի առաջ, այսինքն՝ ամբողջ Եվրասիայի հանձնումը նրանց ձեռքը: Վերլուծաբանները նշում են, որ եթե անգամ տեղի ունենա ամերիկյան տնտեսության դեֆոլտը, որից ԱՄՆ-ը խուսափեց օգոստոսի սկզբին, եւ որին կհաջորդեն աշխարհի մնացած բոլոր տնտեսությունները, ապա առաջին երկիրը, որը կապահովի իր տնտեսական եւ ֆինանսական վերակենդանացումը, կլինի հենց Միացյալ Նահանգները:

Ուստի, կարելի է նաեւ կանխատեսել, որ մոտ ապագայում ԱՄՆ-ն ավելի համարձակ է գնալու գլոբալ ստատուս քվոյի խախտմանը, քանի որ առաջին շահողը եւս նա է դուրս գալու: Չինաստանին այս վիճակում մնում է հետեւել ԱՄՆ-ին՝ հետնապահի դերում չհայտնվելու համար:

## ԼԻԲԻԱ. ՎԱՇԻՆԳՏՈՆԻ ՕՐԱԿԱՐԳԸ ԵՎ ՀԱԶՈՐԴ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԸ Փոլ Քրեյգ Ռոբերտս

**Փոլ Քրեյգ Ռոբերտսը** Ռոնալդ Ռեյգանի վարչակազմում զբաղեցրել է ֆինանսների նախարարի օգնականի պաշտոնը: Նա եղել է *Wall Street Journal* պարբերականի խմբագիր, ԱՄՆ-ի Ներկայացուցիչների պալատի մի շարք հանձնաժողովների աշխատակազմի անդամ: Դասախոսել է ամերիկյան վեց համալսարաններում:

Հոդվածը հրատարակվել է **Foreign Policy Journal** պարբերականում՝ նախքան Լիբիայում ապստամբների կողմից Տրիպոլիի գրավումը:

1930-ական թվականներին ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի եւ Նիդերլանդների գործողությունները, որոնք մեքենայություններ էին հյուսում ճապոնի դեմ, պատճառ դարձան խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում երկրորդ համաշխարհային պատերազմի բռնկման համար: Երեք կառավարությունները սառեցրին իրենց երկրներում գտնվող ճապոնիայի բանկային հաշիվները եւ այդ քայլով խոչընդոտեցին ճապոնիա նավթի, ռետինի, թիթեղի, երկաթի եւ այլ կենսական նշանակություն ունեցող ապրանքների ներմուծումը: Արդյոք Փերլ Հարբորը ճապոնիայի պատասխանը չէ՞ր:

Այժմ Վաշինգտոնը եւ ՆԱՏՕ-ի անդամ նրա խամաճիկները նույն ռազմավարությունն են իրականացնում Չինաստանի նկատմամբ:

Թունիսում, Եգիպտոսում, Բահրեյնում ու Եմենում բողոքի գործողություններն սկիզբ առան մարդկանց դժգոհությունից՝ ուղղված Վաշինգտոնի կամակատար հանդիսացող բռնապետական կառավարությունների դեմ: Սակայն Քադաֆիի դեմ բողոքի գործողությունները, որը Արեւմուտքի կամակատարը չէր, ամենայն հավանականությամբ կազմակերպվել են Կենտրոնական հետախուզական վարչության կողմից Լիբիայի արեւելյան հատվածում, որտեղ կա նավթ եւ որտեղ Չինաստանը զգալի քանակությամբ ներդրումներ է կատարել էներգետիկայի ոլորտում:

Լիբիայի նավթի պաշարների շուրջ ութսուն տոկոսը գտնվում է Արեւելյան Լիբիայում տեղակայված Սիրթի ավազանում, որն այժմ վերահսկվում է Վաշինգտոնի աջակցությունը վայելող ապստամբների կողմից: Քանի որ Լիբիայի համախառն ներքին արդյունքի շուրջ 70 տոկոսի աղբյուրը նավթն է, Լիբիայի՝ մի քանի մասերի բաժանումը

կանանկացնի Տրիպոլիի նկատմամբ հսկողությունը պահպանած Քադաֆիի վարչակարգին: Չինական «Ժողովրդի օրաթերթ» պարբերականը 2011թ. մարտի 23-ին հաղորդել է, որ Չինաստանը շուրջ հիսուն խոշոր ծրագրեր է իրականացնում Լիբիայում: Ռազմական գործողությունների բռնկումը պատճառ է դարձել այդ ծրագրերի իրականացման դադարեցմանը, շուրջ երեսուն հազար չինացի բանվորներ հարկադրված են եղել լքել Լիբիան: Չինական ընկերությունները գտնում են, որ իրենց կորուստները կկազմեն մի քանի հարյուր միլիոն յուան:

Ապագայում սեփական էներգետիկ կարիքները հոգալու համար Չինաստանը հենվում է Աֆրիկայի, հիմնականում Լիբիայի, Անգոլայի եւ Նիգերիայի վրա: Ի պատասխան Աֆրիկայում Չինաստանի տնտեսական ներգրավման, պաշտոնական Վաշինգտոնը մայրցամաքում ներգրավվում է ռազմականապես՝ 2007թ. նախագահ Բուշ կրտսերի կողմից ստեղծված Աֆրիկյան հրամանատարության միջոցով (AFRICOM): Աֆրիկայի քառասունհինգ պետություններ համաձայնվել են համագործակցել Վաշինգտոնի հետ ԱՖՐԻԿՈՍ-ի միջոցով, սակայն Քադաֆին մերժել է այդ առաջարկը՝ դրանով իսկ երկրորդ պատճառը ստեղծելով Վաշինգտոնի համար՝ թիրախ դարձնել Լիբիան:

Լիբիան թիրախ դարձնելու երրորդ պատճառն այն է, որ այդ երկիրը, ինչպես նաեւ Սիրիան, միջերկրածովյան ավազանի միակ պետությունն է, որ չի գտնվում Վաշինգտոնի վերահսկողության կամ առնվազն ազդեցության տակ: Հետեւաբար, բողոքի գործողություններ են բռնկվել նաեւ Սիրիայում: Ինչ էլ սիրիացիները մտածեն սեփական կառավարության մասին, տեսնելով Իրաքի, իսկ այժմ նաեւ Լիբիայի ճակատագիրը, քիչ հավանական է, որ նրանք իրենք հիմք ստեղծեն ամերիկյան զինված ներխուժման համար: Թե՛ Կենտրոնական հետախուզական վարչությունը եւ թե՛ ՄՈՍԱԴ-ը հայտնի են սոցիալական ցանցերի միջոցով բողոքի գործողություններ սադրելու եւ ապատեղեկատվություն տարածելու իրենց ունակությամբ: Այս հատուկ ծառայություններն են, ամենայն հավանականությամբ, սադրել բողոքի գործողությունները, ինչի մեջ նրանց մեղադրում են Լիբիայի եւ Սիրիայի կառավարությունները:

Անակնկալի գալով Թունիսում եւ Եգիպտոսում բռնկված բողոքի գործողություններից՝ Վաշինգտոնը հասկացավ, որ դրանք կարելի է օգտագործել Քադաֆիին եւ Ասադին հեռացնելու համար: Լիբիայում միջամտություն իրականացնելու մարդասիրական պատրվակը հիմնավոր չէ, քանի որ Վաշինգտոնը կանաչ լույս է վառել Սաուդյան Արաբիայի զինված ուժերի առջեւ՝ ջախջախելու Բահրեյնում ընթացող բողոքի գործողությունները, որն ամերիկյան հինգերորդ նավատորմի հիմնական կայանատեղին է:

Եթե Վաշինգտոնը հաջողության հասնի Սիրիայում Ասադի վարչակարգը տապալելու գործում, Ռուսաստանը կկորցնի սիրիական Տարտուս նավահանգստում տեղակայված Միջերկրական ծովում գտնվող իր նավակայանը: Այնպես որ Վաշինգտոնը շատ բան կարող է շահել, եթե ի վիճակի լինի օգտագործել ժողովրդական ասպտամբությունների քողածածկույթը՝ դուրս մղելու համար Միջերկրական ծովից թե՛ Չինաստանին եւ թե՛ Ռուսաստանին: Հին Հռոմի «Մեր ծովը» կդառնա Վաշինգտոնի «Մեր ծովը»:

Վերահսկողության տակ գտնվող ամերիկյան զանգվածային լրատվության միջոցներն ակտիվորեն աշխատում են Քադաֆիին եւ Ասադին (որն ակնաբույժ է եւ Սիրիա է վերադարձել հոր մահից հետո կառավարությունը ղեկավարելու նպատակով) հրեշներ ներկայացնելու համար:

Շատերը չնկատեցին ամերիկյան երկերեսամիությունը, երբ Օբաման Քադաֆիին եւ Ասադին անվանեց բռնապետեր: Մինչդեռ 21-րդ դարից սկսած՝ ԱՄՆ նախագահը վերածվել է Կեսարի: Հենվելով բացառապես Արդարադատության նախարարության հուշագրի վրա՝ նախագահ Բուշ կրտսերը հռչակվեց որպես ամերիկյան օրենքներից, միջազգային իրավունքից եւ Կոնգրեսի վերահսկողությունից վեր կանգնած անձնավորություն, քանի դեռ նա գործում էր որպես գլխավոր հրամանատար «ահաբեկչության դեմ պայքարում»:

Կեսար Օբաման Բուշ կրտսերից մի քայլ առաջ անցավ: Նա ԱՄՆ-ին տարավ Լիբիայի դեմ պատերազմի՝ առանց նույնիսկ մտածելու Կոնգրեսից թույլտվություն ստանալու մասին: Սա աննախադեպ խախտում է, սակայն ոչ գործունակ Կոնգրեսն ի վիճակի չէ պաշտպանել իր իրավունքները: Ընդունելով գործադիր իշխանության պահանջները՝ Կոնգրեսը տեղի տվեց «կեսարականությանը»: Ամերիկյան ժողովուրդն ավելի շատ վերահսկողություն չունի սեփական կառավարության նկատմամբ, քան այն պետություններում, որտեղ կառավարում են բռնապետերը:

Համաշխարհային տիրապետության հասնելու Վաշինգտոնի ձգտումը աշխարհը մոտեցնում է Երրորդ համաշխարհային պատերազմին: Չինաստանը պակաս հպարտ չէ, քան ճապոնիան 1930-ական թվականներին, եւ հազիվ թե համաձայնվի ահաբեկվել եւ կառավարվել Չինաստանի տեսակետից անկում ապրող Արեւմուտքի կողմից: Ռուսաստանի դժգոհությունը իրեն ռազմական շրջափակման ենթարկելու փորձերի դեմ հետզհետե ավելանում է: Վաշինգտոնի գոռոզությունը կարող է հանգեցնել ճակատագրական սխալ հաշվարկի:

*Թարգմանությունը՝  
Բենիամին Պողոսյանի*

## ԱՄԱՌՆ ԱՌԱՆՑ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ Ֆեոդոր Լուկյանով

Սովորաբար, համաշխարհային քաղաքականության մեջ սեպտեմբերը նշանավորում է նոր շրջանի սկիզբ՝ ամառային կարճատև հանգստից հետո, սակայն այս տարի դադար տեղի չունեցավ: 2011-ի ամռան իրադարձությունները բոլորին պահեցին արտակարգ լարվածության մեջ. լիբիական պատերազմը, ֆինանսական կատակլիզմները Եվրոպայում եւ Ամերիկայի պարտքի հետ կապված խնդիրները, որոնք վերաճեցին սուր քաղաքական դիմակայության: Այս բոլորը փոփոխվող իրականության փոխկապակցված դրսևորումներ են, որոնց հետևում կանխատեսվում է նոր պատկեր:

Մուամար Քադաֆիի վարչակարգի տապալման կամպանիան ՆԱՏՕ երկրների նախորդ ռազմական գործողություններից ուներ մի շարք տարբերություններ: Նախևառաջ՝ դա Միացյալ Նահանգների մի կողմ քաշվելու դիրքորոշումն էր, որը մենակատարի դերը հանձնեց Ֆրանսիային ու Մեծ Բրիտանիային: Լիովին հեռանալ Վաշինգտոնին չհաջողվեց, որովհետև դաշնակիցների ռազմական հնարավորությունները սահմանափակ են, սակայն ԱՄՆ-ն իր մասնակցությունը հասցրեց նվազագույնի: Նման մոտեցումն արտացոլում է ամերիկյան քաղաքական վերնախավում առաջնայությունների վերիմաստավորումը:

Առաջիկա տարիների խնդիրն է ծախսերի կրճատումը եւ ավելորդ պարտավորություններից թոթափվելը: Ուշադրությունը տեղափոխվում է դեպի Արեւելյան Ասիա եւ Ասիական-խաղաղօվկիանոսյան տարածաշրջան: ԱՄՆ-ը շահագրգռված է, որպեսզի՝ պահպանելով ազդեցությունը, նվազեցնի ներգրավվածության ծավալը Մերձավոր Արեւելքում, որից ամերիկյան ժողովուրդը հոգնել է: Միաժամանակ, առկա է խնդիր, թե ինչ անել մերձավորագույն դաշնակցի՝ Եվրոպայի հետ, որին չի կարելի վանել, բայց հասկանալի չէ, թե ինչպես օգտագործել, քանզի այն չի ցանկանում ռազմաքաղաքական բեռի մի մասը վերցնել իր վրա:

Լիբիական կամպանիան հնարավորություն ընձեռեց համատեղել այդ երկու խնդիրների լուծումը: Լիբիան Ֆրանսիայի եւ Իտալիայի բեմաւայանն է, ինչպես նաեւ Աֆրիկայից այդ երկրներ անօրինական գաղթյալների ճանապարհին գտիչ երկիր: Եվրամիության թուլացման ֆոնին Փարիզի ու Լոնդոնի՝ որպես միջազգային կարգի խաղացողներ հանդես գալու ցանկությունը հանգեցրեց նրան, որ Եվրոպայի առանցքային

երկրները կամավոր նետվեցին լիբիական ճակատ: Այլ բառերով՝ իրենց վրա վերցրին տարածաշրջանային կարգավորողների գործառույթը, ինչը համապատասխանում է ԱՄՆ նպատակներին՝ աշխարհի տարբեր մասերում գտնել լոյալ գործընկերներ, որոնք կկարողանան Ամերիկայի փոխարեն աշխատանք կատարել:

Թե որքան արդյունավետ է ֆրանկո-բրիտանական տանդեմն այս գործառույթն իրագործել՝ վիճելի հարց է: Սակայն Վաշինգտոնը բարձրաձայն կհիանա ձեռքբերումով՝ գովաբանելով դաշնակիցների մարտունակությունը, քանզի Միացյալ Նահանգներին անհրաժեշտ է եվրոպացիների մեջ պահպանել ռազմատենչությունը՝ ուղղված դեպի «հարավային փորատակ»:

ԱՄՆ երկրորդ տարածաշրջանային հենարանը դառնալու են Պարսից ծոցի միապետությունները: Նախ՝ «արաբական գարնան» ժամանակ նրանք կանգուն մնացին, երկրորդ՝ հանուն սեփական շահերի պաշտպանության ցուցադրեցին միջամտության ընդունակություն: Սաուդյան Արաբիան ճնշեց բողոքները Բահրեյնում, իսկ Զաթարը եւ Արաբական Միացյալ Եմիրությունները մասնակցեցին լիբիական պատերազմին, ինչն օգնեց Արեւմուտքին ապահովել իրեն գաղութային արշավանքի մեջ մեղադրանքից: Պարսից ծոցի պետությունների խորհուրդը՝ որպես առավել պահպանողական վարչակարգերի միություն, առայժմ կատակլիզմներից շահած է դուրս եկել:

Եվրոպայում սպասվում են փոփոխություններ: 2011թ. գարնանը տեղի ունեցավ նշանակալի իրադարձություն. Ֆրանսիան ու Գերմանիան՝ եվրոպական ինտեգրման երկու հենարանները, հայտնվեցին լիբիական բարիկադների տարբեր կողմերում: Անկախ շարժառիթներից, որոնցից ելնելով Բեռլինը չսատարեց Փարիզի կողմից նախաձեռնված պատերազմին, հետեւանքները մասշտաբային են:

«Լիբիայի ազատարարի» դափնիներից ոգելորված՝ Ֆրանսիան մտադիր է զարգացնել հաջողությունը եւ զբաղեցնել Եվրոպայի միանձնյա քաղաքական առաջատարի տեղը: Սակայն Հին աշխարհի տնտեսական հիմքը հանդիսանում է Գերմանիան, որը սեղմված է աքցանի մեջ:

Եվրոպայում բոլորը Բեռլինից պահանջում են Եվրոյի փրկությանն ուղղված ակտիվ դիրքորոշում. ընդ որում, մեծ կասկածանքով են արձագանքում նման դիրք զբաղեցնելու նրա ցանկացած հավակնություններին: Նույն Գերմանիայում աճում է հանուն Եվրոպական արժույթի նոր զոհողությունների գնալու հանդեպ դիմադրությունը:

Ֆրանսիայից սահմանազատման անսովոր իրավիճակը եւ դրա հետ կապված ներգերմանական քաղաքական լարվածությունը խորացնում են խառնաշփոթը: Այդ ֆոնին փոխվում է բանավեճերի տոնայնությունը:

Մինչեւ վերջերս եվրոյից հրաժարվելու հարցի քննարկումը եվրոպայում գրեթե անենուրեք տաքու էր. այդ թեմայով դատողություններ անել իրենց թույլ էին տալիս միայն անգլոսաքսոնական լրատվամիջոցներն ու փորձագետները: Առավելագույնը, որ թույլատրվում էր աշխարհամասային բանավեճերում, դա զգուշավոր ենթադրությունն էր, թե առողջ միջուկի պահպանման համար կարող է պետք լինի եվրագոտուց ամենախնդրահարույց երկրների հեռացումը:

Վերջերս Financial Times-ում հայտնվեց Գերմանիայի արդյունաբերողների ֆեդերացիայի նախկին ղեկավար Յանս-Օլաֆ Յենկելի մեկնաբանությունը. եվրոյից պետք է հրաժարվի հենց «առողջ միջուկը»: Գերմանիան, Ավստրիան, Նիդերլանդները եւ Ֆինլանդիան ստեղծելու են նոր արժույթ՝ եվրոն թողնելով հարավեվրոպացիների տնօրինությանը, որոնք կարող են արժեզրկել այն եւ դրանով բարձրացնել սեփական մրցունակությունը:

Շշմեցուցիչը, նախեւառաջ, այն է, որ հեղինակը միջուկի մեջ չի ընդգրկել Ֆրանսիան: Հասկանալի է, որ պաշտոնաթող արդյունաբերական լոբբիստն իրեն կարող է սադրիչ մտքեր թույլատրել: Սակայն գերմանական կառավարությունը միշտ ուշադրության է առնում խոշոր բիզնեսի կարծիքը եւ հաճախ ղեկավարվում հենց դրանով: Եթե ներկայիս միտումները շարունակվեն, Ֆրանսիայի քաղաքական հավակնություններն ու Գերմանիայի տնտեսական շահերը կարող են կորցնել փոխկապակցվածությունը: Դա կնշանակի ինտեգրման մոդելի վախճան, որը գոյություն ունի անցած դարի կեսերից:

Միացյալ Նահանգները համեմատաբար անտարբեր է ընդունում եվրոպական ինտեգրումը: Քանի դեռ միասնական նախագիծը ծառայել է Հին աշխարհի պայթյունավտանգ պատմական տարածայնությունների մեղմացմանը եւ դրանով թեթեւացրել Ամերիկայի խնդիրը, Վաշինգտոնը դրան դրականորեն է վերաբերվել: Ներկայում ամերիկացիների համար իմաստ չունի ջանքեր գործադրել եվրոյի պահպանման համար, որը ստեղծվեց եվրոպայի հավակնությունների գազաթնակետին՝ որպես այլընտրանք Ամերիկայի ֆինանսական եւ քաղաքական գերիշխանությանը: Ընդհակառակը, Միացյալ Նահանգներին այժմ անհրաժեշտ է հանդգնել աշխարհին, որ դոլարին, նրա խոշոր ծանրագույն խնդիրներով հանդերձ, փոխարինող չկա:

Չինաստանի՝ կողմնակի խաղացողներից ամենաազդեցիկի պահվածքը ցույց է տալիս, որ այն եվրոպական արժույթի եւ միասնական նախագծի հեռանկարին չի հավատում: Անցյալ ամռանը Չինաստանը լուռ վրդովմունք էր ապրում՝ տեսնելով, թե ինչպես ամերիկացի քաղաքական գործիչներն իրենց ձեռքերով խարխլում են սեփական ֆինանսական

կայունությունը, որը նրանց համար Չինաստանը պատրաստ էր պահպանել: Արեւմտյան վերնախավերի նկատմամբ չինական ղեկավարության անվստահության աստիճանը սրընթաց աճում է: Ղեկավարների հաջորդ սերնդին, որը 2012թ. աշնանը կուսակցության հերթական համագումարից հետո կգա իշխանության, հարկ կլինի որոշում կայացնել. ի՞նչ անել տնտեսական մոդելի հետ, որը հիմնված է գլոբալ տնտեսական փոխադարձ կապերում ԺՏՀ-ի առավելագույն մասնակցության վրա: Եթե որոշումը լինի աստիճանական «անջատման» օգտին, ապա այն արմատապես կազդի աշխարհի տնտեսական զարգացման ընթացքի վրա:

Այժմ, սակայն, Պեկինը սատարում է ամերիկյան տնտեսությանն ու դոլարին, որը, չինական հաշվարկներով, ինչ-որ ձևով կպահպանվի: Եվրոյի վերաբերյալ կանխատեսումները հակառակն են, եւ Չինաստանը ջանում է Եվրոպայում ձեռք բերել նյութական ակտիվներ՝ ձեռնարկություններից մինչեւ հողատարածքներ: Եվրոպական տնտեսական ճգնաժամը կարող է խախտել արժուրա-ֆինանսական համակարգը, բայց արտադրական հզորությունները չեն կորչի, իսկ Հին աշխարհում ներդրումների իրավական պաշտպանվածությունն անհամեմատ մեծ է, քան Աֆրիկայում կամ Մերձավոր Արեւելքում, որտեղ Չինաստանը նույնպես ամեն ինչ գնում է:

Վերջապես ամռան եւս մեկ ուշագրավ արդյունք:

Տեղի ունեցավ լիբիական վարչակարգի ակտիվների (ոչ միայն Քադաֆիի ընտանիքի մասնավոր պահուստների, այլեւ Լիբիայի կենտրոնական բանկի) մասշտաբային սեփականագրկում եւ, ինքնական քաղաքական որոշման հիման վրա՝ դրանց փոխանցում նրա քաղաքական հակառակորդներին:

Առաջատար երկրները պարզապես սկսեցին ապստամբներին դիտել որպես օրինական իշխանություն՝ անորոշ հիմքով նրանց օժտելով միջազգային օրինականությամբ: Ուզո Չավեսի հայտարարությունը, թե ինքը մտադիր է Վենեսուելայի ֆինանսական ակտիվները հանել եվրոպական բանկերից եւ տեղավորել այլ երկրներում, այդ թվում Ռուսաստանում՝ դրա անմիջական հակադարձումն էր: Չավեսին, անշուշտ, կարելի է էքսցենտրիկ անձնավորություն համարել, սակայն Լիբիայի նկատմամբ տեղի ունեցած նախադեպը կավելացնի նրանց փաստարկները, ովքեր ձգտում են հասնել համաշխարհային ֆինանսական համակարգի դիվերսիֆիկացման եւ հեռանալ նրա արեւմտակենտրոնությունից:

**Gazeta.ru**

01.09.2011

## ԱՇԽԱՐՅ. ՔԱՌՍԻ ԽՈՐԱՑՈՒՄ

### Սերգեյ Կարազանով

Մի քանի տարի առաջ որոշ վերլուծաբաններ մատնանշում էին, թե աշխարհն այնքան խորն ու արագ է փոփոխվում, որ սկսում է հիշեցնել նախապատերազմական դրություն: Ես ընթերցողներին եւ ունկնդիրներին հանգստացնում էի հետեւյալ փաստարկով. քանզի գոյություն ունի միատիպական սարսափ ներշնչող միջուկային զենք, ինչը խանգարում է խոշոր երկրներին՝ փորձելու մեծ պատերազմի միջոցով դադարեցնել կամ շտկել փոփոխությունները, դրությունն իրականում նախապատերազմական չէ:

Հիշեցնեն որոշ փոփոխությունների մասին: Մարդկության պատմության մեջ աննախադեպ արագությամբ տնտեսությունում ուժերի հարաբերակցության տեղաշարժ՝ հոգուտ նոր Ասիայի: Հերթական պայքար պաշարների եւ, համապատասխանաբար, տարածքների համար, որոնցում նրանք տեղակայված են եւ կարող են արտադրվել: Միջազգային կառավարման ինստիտուտների հին համակարգի փլուզում՝ տնտեսական, սոցիալական եւ բնապահպանական գործընթացների գլոբալացման շարունակության պայմաններում: Եվ ամենագլխավորը. վերնախավերի (առաջին հերթին՝ արեւմտյան)՝ կատարվածը հին տեսությունների շրջանակներում բացատրելու կամ նորերը մտածելու անընդունակության խորացում:

10-20 տարի առաջ համարվում էր, որ ազգային պետությունը հեռանում է՝ դանդաղորեն, սակայն հաստատապես փոխարինվելով վերազգային կառավարման մարմիններով, անդրազգային կորպորացիաներով (ԱԱԿ), միջազգային ոչ կառավարական կազմակերպություններով (ՈԿԿ):

Այժմ, ինչպես երեւում է, նոր աշխարհի այս հիմնասյուներն աչքի առաջ փլվեցին: Միջազգային կազմակերպությունների մեծամասնությունն ակնհայտորեն թուլանում է (ՄԱԿ, ՆԱՏՕ, ԱՄՅ, ՀԲ), մյուսներն էլ սուսկ ձեւացնում են, թե ունեն ազդեցություն («ուղեղայն», «քսանյակ»): ԱԱԿ-ները հանդիսանում են տնտեսական գլոբալացման շարժիչը, բայց նրանց քաղաքական ազդեցությունը մի կարգ ցածր է, քան 20 կամ 30 տարի առաջ էր: ՈԿԿ-ների մեծամասնությունն այդպես էլ գլոբալ խաղացող չդարձավ: Իսկ նրանք, ովքեր մնացին մակերեւույթին, ավելի հաճախ են հանդես գալիս որպես պետությունների կամ նրանց խմբերի գործակալներ: Համաշխարհային կառավարության, ԱԱԿ-ների կամ ՈԿԿ-ների

անսահման իշխանությանը շարունակում են հավատալ սոսկ «դավադրության տեսության» կողմնակիցները, որոնց թիվը, ճիշտ է, կարծես թե, աճում է:

Վերջին տարիներին համաշխարհային քաղաքականության գրեթե փրկարար վերազգայնացման (ռենացիոնալիզացիա) հույս հայտնվեց: Վերազգայնացման տեսության համաձայն, հասարակությունները, զգալով գլոբալ աշխարհի մարտահրավերները եւ կառավարման վերազգային մարմինների անգործունակությունը, նետվեցին իրենց շահերի հին, սակայն հավատարիմ պաշտպանի՝ ազգային պետության հովանու ներքո, որն ուժեղացել է: Տեսությունն ամրապնդվեց նաեւ Ասիայում՝ ավանդական ազգային պետությունների տարածաշրջանում տնտեսության եւ քաղաքականության առաջընթացի ակնառու փաստով:

Նման տեսությունը հաճելի է եւ իմ ռուսական ականջին: Ռուսաստանը խիստ ավանդական պետություն է, որը փորձում է բավականաչափ հաջողությամբ խաղալ ուժերի հաշվեկշռի հին բարի կամ չար դիվանագիտության կանոններով: Բնականաբար՝ արդիական շտկումներով: Թվում է, նաեւ այստեղ, ինչպես հումքի եւ էներգապաշարների գների առայժմ երկարաժամկետ թվացող բարձրացման դեպքում, Ռուսաստանի բախտը բերում է: Քամին նրա առազաստներին է փչում: Աշխարհը վերադառնում է հին քաղաքականությանը, որից Ռուսաստանը չի հեռացել եւ որտեղ նա ուժեղ է:

Սակայն վերջին տարին ցույց է տալիս, որ եւ ազգային պետությունը, եւ ավանդական դիվանագիտության աշխարհը փրկություն չեն:

Պետությունները, առաջին հերթին՝ ամենազարգացած, գործում են սխալներ, որոնք ստիպում են խորհել, թե ում կարելի է վստահել կամ ում ապավինել դիվանագիտության ու քաղաքականության մեջ:

Սկսենք Եվրոպայից՝ մեր գլխավոր գործընկերոջից: Իրադրությունն այնտեղ գնալով ավելի տագնապալի տեսք է ստանում: Նախորդ երկու տասնամյակներին, ինտեգրման իներցիայի ազդեցության տակ, որը կոմունիզմի հանդեպ տարած հաղթանակի էյֆորիայից բազմապատկվեց, Եվրոպան, միավորվելով Եվրամիության մեջ, գործեց երեք սխալ: Սկզբում հայտարարեց միասնական արտաքին քաղաքականության ձգտելու մասին, որին, պարզվեց, Եվրոպացիները պատրաստ չէին: Արդյունքը՝ ցածրագույն ընդհանուր հայտարարով քաղաքականություն, որը Եվրոպական բոլոր մայրաքաղաքներին զրկեց ազդեցությունից, բայց այն չփոխանցեց Բրյուսելին: Ազդեցությունը ցնդեց: Երկրորդ. չափազանց արագ ընդարձակումը, որը ԵՄ-ն դարձրեց էլ ավելի փխրուն: Եվ երրորդ. ընդհանուր արժույթի ներմուծումը՝ առանց միասնական տնտեսական եւ

ֆինանսական քաղաքականության ներդրման, որը թույլ տվեց Հունաստանի տիպի պետություններին տասնամյակներ շարունակ ապրել շռայլ: Դրա համար այժմ բոլորն են վճարում:

Նոր աշխարհում մեզ պետք է ուժեղ պետություն, որը կպահպանվի ուժեղ հասարակության եւ ուժեղ ինստիտուտների կողմից:

Ստեղծվում է մի իրավիճակ, երբ կայունության կղզին՝ Եվրոպան, վերածվում է գրեթե անկանխատեսելիության գործոնի: Ի՞նչ կլինի, եթե սկսի փլուզվել հենց ինքը՝ Եվրոպական ինտեգրման համակարգը: Այդ մասին չես ուզում մտածել: Ինտեգրված խաղաղ Եվրոպայի հետ, բոլոր տարածայնություններով հանդերձ, հեշտ ու հաճելի է ապրել:

Սիայն օգոստոսին, մեկ տարի տեւած անպտուղ մաներներից հետո, հուլյսի նշույլ առկայծեց: Սարկոզին եւ Մերկելն առաջարկեցին պլան, համաձայն որի (եթե այն ընդունվի), ԵՄ-ն կունենա իր անդամներին եվրոյի գոտուց, իսկ միգրացե՝ նաեւ հենց միությունից վտարելու կամ, պարզապես, առաջին եւ երկրորդ մակարդակների անդամակցություն ստեղծելու տեսական հնարավորություն: Սակայն մյուս անդամ երկրների առաջին արձագանքից ելնելով եւ իմանալով, թե ինչպես են ԵՄ-ում ընդունվում որոշումները, հույսն առայժմ թույլ է: Եվրոպացիները մասամբ տառապում են ավելորդ վերազգայնականությունից:

Անհամեմատ մեծ տագնապ է ներշնչում իրավիճակը գոյություն ունեցող, անկասկած, ամենախնքնիշխան պետություններից մեկում: Շնորհիվ վերջին տասնամյակների ներքին եւ ֆինանսական, մեղմ ասած, արտասովոր քաղաքականության, ԱՄՆ-ն ընկել է համակարգային ճգնաժամի մեջ, որը վտանգի տակ է դրել ողջ աշխարհը:

Աշխարհը վստահել է ոչ միայն եւ ոչ այնքան ամերիկյան տնտեսությանը՝ թեկուզեւ ամենահզոր: Վստահել է նրա քաղաքական համակարգին եւ կառավարման որակին: Դուլարները գնել են հաճույքով՝ ԱՄՆ-ում ներդրումները համարելով ամենահուսալին:

Սակայն գալիս է եւ դրա վերջը: ԱՄՆ պետական պարտքի վերին շեմի ավելացման շուրջ վերջին գոտեմարտերը ցույց տվեցին, որ ամերիկյան քաղաքական համակարգը «լողացել» է:

Ամերիկյան պետությունը եւ հասարակությունն անընդունակ գտնվեցին մեծ փոփոխությունների դարաշրջանում իրականացնել արդյունավետ առաջատարություն: Մեծանում է քարանձավային մտածողության գործիչների՝ իշխանության գալու վտանգը:

Վերազգայնացման տեսության կողմնակիցները հույս ունեին, թե պետությունը կլրացնի կառավարելիության վակուումը: Սակայն խոշորագույն պետությունները, պարզվում է, դրան ընդունակ չեն:

ԱՄՆ-ն ավելի ու ավելի ակնհայտորեն է ազատում առաջատարի իր տեղը: Եվրոպան իր առաջատարության դիրքերն առայժմ պարզապես հանձնել է, միջազգային ինստիտուտները քանդվում են կամ գործունեություն ձեւացնում: Կլիմայական փոփոխությունների միջազգային կարգավորման գործընթացը մեռած է: Բայց չէ՞ որ դրանք, այժմ բոլորին ակնհայտ է, ահավոր սպառնալիք են: Սակայն նախընտրում են այն անտեսել:

Նոր առաջատարները չեն շտապում զբաղեցնել առաջացած դատարկությունը, վերցնել պատասխանատվությունը:

Առկա է ոչ թե սոսկ ձախողում, այլ անդունդի խորացում աշխարհի կառավարելիության ոլորտում: Այն ոչ թե հենց այնպես գնում է, այլ արդեն մոտեցել է քառսին:

Ավելի են շատացել ֆինանսական համակարգի անկառավարելիության նախանշանները: Իսկ հին Արեւմուտքը ներքաշվում է երկարաժամկետ տնտեսական ճգնաժամի մեջ, որը գրեթե հաստատապես իր հետեւից կքաշի նաեւ մնացած աշխարհը:

Բոլորը վախենում էին առեւտրային պատերազմներից: Սակայն, հաշվի առնելով միջնաժամկետ հեռանկարում ԱՄՆ ֆինանսական խնդիրների, կարծես թե, անլուծելիությունը, հավանաբար, շուտով կսկսեն ֆինանսական պատերազմները: Սկզբում դոլարի, իսկ հետո եւ մյուս արժույթների մրցակցային արժեզրկումն էլ ավելի հավանական է երեւում, եթե ոչ անխուսափելի: Իսկ դա իր հետեւից կբերի նաեւ մարդկանց զանգվածային աղքատացում, դժվար կանխատեսելի սոցիալական հետեւանքներ, որոնց ավերումների տեսքով մենք այս ամառ ականատես եղանք Լոնդոնի փողոցներում, Իսպանիայում, Գերմանիայում եւ այլ երկրներում: Եվ, հավանաբար, աշխարհաքաղաքական պայքարի դաժանագույն սրացում:

Եվ այդ ժամանակ հարկ կլինի էլ ավելի շատ ապավինել անխտենմությունից ապահովագրմանը՝ պայմանավորված միջուկային զենքի հանդեպ մեր երկյուղով: Սակայն ոչ ոք չգիտի, թե որքան հուսալի է այդ ապահովագրումն աշխարհում, ուր առաջատարները կորցրել են կողմնորոշիչները:

Շատ կցանկանայի, որ իմ մտավախությունները չարդարանային: Բայց առայժմ աշխարհը (համենայն դեպս՝ հին Արեւմուտքը) զարգանում է ոչ լավագույն սցենարով:

# Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Գագիկ Տեր-Հարությունյան ՆՈՐ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՈՐ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ . . . . .	1
Ռուբեն Մելքոնյան ԹՈՒՐՔԻԱՅԻ ԷԹՆՈՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐՋ . . . . .	7
Հայկ Գաբրիելյան ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՍՐԱՑՈՒՄԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ . . . . .	11
Սեւակ Սարուխանյան ԻՐԱՆ. ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՋԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ . . . . .	20
Արտաշես Տեր-Հարությունյան ԹՈՒՐՔ-ԻՍՐԱՅԵԼԱԿԱՆ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԵՐԱՓՈԽՎՈՒՄ ԵՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ . . . . .	25
Սուրեն Սարյան ԱՄՆ – ՉԻՆԱՍՏԱՆ. ՊԱՅՔԱՐ ԳԼՈՐԱԼ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՀԱՄԱՐ . . . . .	31
Փոլ Քրեյգ Ռոբերտս ԼԻԲԻԱ. ՎԱՇԻՆԳՏՈՆԻ ՕՐԱԿԱՐԳԸ ԵՎ ՀԱՋՈՐԴ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԸ . . . . .	38
Ֆեոդոր Լուկյանով ԱՄԱՌՆ ԱՌԱՆՑ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ . . . . .	41
Սերգեյ Կարազանով ԱՇԽԱՐՀ. ՔԱՌՍԻ ԽՈՐԱՑՈՒՄ . . . . .	45

*Շապիկին պատկերված է  
Թռչկանի ջրվեժը (Lռռի)*

«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ», Հայաստանի  
Հանրապետական կուսակցության հրատարակություն  
**Խմբագրական խորհուրդ**  
Երեւան, 375010, Սելիք-Աղամյան 2: Հեռ. 58 04 91, 58 04 83:  
Էլ. փոստ՝ hanrapetakan@hkk.am:  
Հիմնադիր՝ Հայաստանի Հանրապետական կուսակցություն:

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70×108 1/16:  
Պայմանական 3,5 մամուլ: Տպաքանակը՝ 1000:  
Տառատեսակը՝ «Arial Armenian» եւ «Vs Helvetica»:  
Վկայական՝ ՕՍՍ 000176:  
Տպագրվել է «Ամարաս» տպարանում: